

338.98(47)

μ-26

1933

2802-10



Ա. ԽԱՆՋՅԱՆ

ՀՆԳԱՄՅԱԿԻ

ՀԱՂԹԱՆԱԿԸ

ՅԵՎ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ

338.98(47)
Խ-26

ԿՈՒՍՂՐԱՏ
ՅԵՐԵՎԱՆ 1933

333.98(47)

11-26

Ա. ԽԱՆՁՅԱՆ

ՀՆԳԱՄՅԱԿԻ

ՀԱՂԹԱՆԱԿԸ

ՅԵՎ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Ձեկորից՝ ՅԵՐԵՎԱՆԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ, ՊՐՈՑԵՍԻՆԻԹԵՆԱԿԱՆ
ՅԵՎ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԱԿՏԻՎԻ ՆԻՍՏՈՒՄ 1933 թ.

ՀՈՒՆՎԱՐԻ 22-ԻՆ, ԼԵՆԻՆԻ ՄԱՀՎԱՆ Զ-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՈՐԸ:

1582

ԿՈՒՍԶՐԱՏ

ՅԵՐԵՎԱՆ—1933

6404-56

Տեխն. խմբագիր՝ Մ. Նիքի
Սրբազնիչ՝ Ա. Տեր-Մկրտչյան
Հանձնված է արտադրության 28 հունվարի 1933 թ.
Ստորագրված է տպագրելու 3 փետրվարի 1933 թ.
Տիրաժ 5000. Հրատ. № 79. 112.000 տպ. թշ.

Պետհրատի տպարան, Պատվեր № 252 Գլավիտ 7712 (բ)

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Պրոլետարական հեղափոխության մեծագույն հանճարի, մեր մեծ ուսուցչի և առաջնորդի մահվան իններորդ տարեդարձը զուգադիպում է սոցիալիստական հեղափոխության զարգացման ամենանշանակալի ու բովանդակալից մի շրջանին: Վ. Ի. Լենինի մահվան իններորդ տարեդարձը զուգադիպում է այն շրջանին, յերբ ինքնաբերական Միության մեջ հաղթականորեն ավարտվել է սոցիալիզմի կառուցման առաջին հնգամյակը, իսկ կարմիր դժից դուրս, կապիտալիստական աշխարհում, ծայրագույն աստիճանի սրման է հասել կապիտալիզմի ընդհանուր կրիզիսը: Բնական է, վոր ինքնաբերական Միության հնգամյակի հանրազումարները կադարվում են համաշխարհային մասշտաբով, վորովհետև հնգամյակի արդյունքները լավագույն ցուցանիշն են յերկու ներհակ սիստեմների դնահատման համար, նրանք լուսավորում են կապիտալիզմի ու սոցիալիզմի վոչ միայն այսպիսի ուրը, այլև վաղվա ուրը, նրանք ցույց են տալիս նոր, սոցիալիստական հասարակարդի անխուսափելի հաղթանակն ամբողջ աշխարհում, նրանք ցույց են տալիս հին, կապիտալիստական հասարակարդի անխուսափելի կործանումը: Վորպես յերկու ներհակ սիստեմների դնահատության չափանիշ՝ առաջին հնգամյակի արդյունքները մտնում են համաշխարհային պատմության մեջ, վորպես նրա նորագույն շրջանի ամենածանրակշիռ փաստը, վորպես միջազգային քաղաքականության կշեռքի պրոլետարական նժարի վրա՝ ամենախոշոր ծանրությունը: Ահա, թե ինչու բացառիկ ուշադրություն պետք է արդյունքների հանրազումարն են կատարում այսուր մեր յերկրի բանվոր դասակարգն ու աշխատավորական մասսաները, նրանք, վորոնք չորս տարվա ըրտնաթոր աշխատանքով իրականություն դարձրին հնգամյա պլանը. ահա, թե ինչու նույնքան ուշադրի՝ հնգամյակի կատարման հանրազումարներն են անում միջազգային պրոլետար-

բխալի բոլոր յերկրներն ջուկաները, նրանք, վորոնք սկզբից ել նայում եյին մեր հնգամյակի վրա, վորպես սեփական գործի, վորպես սեփական ազատագրութեան համար մղվող հեղափոխական պայքարի կարևորագույն ողակի վրա: Ահա, թե ինչու, վերջապես, հնգամյակի արդյունքներին անտարբեր չեն վերաբերվում նաև մեր թշնամիները, իմպերիալիստական բանակը իր բոլոր դաշնակիցներով և գործակալներով, բոլոր նրանք՝ վորոնք սկզբում քմծիծաղով, ապա ատամներն կրճառցով և ի վերջո ավելի կամ պակաս չափով վարագուրված դասակարգային յերկրողով ու սարսափով հետևում եյին հնգամյակի ամեն մի քայլափոխին:

Թվում ե թե, ընկերներ, մեծ ուսուցչի մահվան տարեդարձի այս օրը, Լենինի անմեռ հիշատակի հավերժացման լավագույն միջոցն այն կլինի, վոր մի անգամ ել հետադարձ ուշադիր հայացքով չափենք ու կշռենք նրա մահից հետո՝ կուսակցութեան և Խորհրդային Միութեան անցած ճանապարհը, տեսնելու համար, թե ի՞նչ չափով են կիրառվում նրա հեղափոխական մեծ ավանդները: Այդ անհրաժեշտ ե անել նաև այն պատճառով, վոր լենինյան ավանդները, վորպես եպոխայի ամենարարձր դադափարները, այն հատկութունն ունեն, վոր չեն հանում, ընդհակառակն, հեղափոխական վերելքի յուրաքանչյուր շրջադարձին փայլում են ավելի վառ լույսով, լուսավորում են մեր պայքարի ու առաջխաղացման այսօրվա ճակատամար, նոր խնդիրներն լուծման միջոցներն են ցույց տալիս:

Այսպես ուրեմն, իրողործելով հնգամյակը, ի՞նչ չափով հավատարմորեն կատարել ենք լենինյան հեղափոխական պատգամները: Այս հարցի սպառնիչ պատասխանը տվեց կուսակցութեան կենտրոնական շտաբի, Կենտրոնական Կոմիտեյի և Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովի, առաջին և յերկրորդ հնգամյակների սահմանադրված կայացած, իրոք վոր պատմական պլենումը: Այդ հարցի սպառնիչ պատասխանը տվեց Լենինի մեծ գործակիցն ու աշակերտը, ընկեր Ստալինը, վոր Կենտկոմի պլենումում, իրեն հատուկ հատակությամբ ու խորությամբ, մարքս-լենինյան դիալեկտիկայի կիրառման դասական նոր օրինակը տվեց, վերլուծելով առաջին հնգամյակի արդյունքները: Ընկեր Ստալինը փայլուն ապացույցը տվեց այն փաստի, վոր հնգամյակի հիմնական խնդիրները ավալ պատմական շրջանի համար լենինյան կարևորագույն

ավանդների ամփոփումն եյին, վոր հնգամյակի հաջողութեամբ հավատումն արդյունք ե այն փաստի, վոր կուսակցութեանը, իր լենինյան դեկալարութեամբ, կարողացել ե անշեղ առաջնորդել մասներին Լենինի հանճարով ուրվագծված ուղիներով:

Յեւ իսկապես: Վորն եր հնգամյա պլանի հիմնական խնդիրը: Հարցի լավագույն ու սրբորոշ պատասխանը ձևակերպում ե ընկեր Ստալինը: Նա ասում ե.—

«Հնգամյա պլանի հիմնական խնդիրն եր՝ փոխադրել մեր յերկիրը իր հետամնաց, հաճախ միջնադարյան տեխնիկայով նոր, ժամանակակից տեխնիկայի ու յետերի վրա: Հնգամյակի հիմնական խնդիրն եր՝ ԽՍՀՄ-ն ագրարային ու անոդր, կապիտալիստական յերկրների քառահաճույքներից կախված յերկրից վերածել ինդուստրիալ ու հոդր յերկրի, միանգամայն ինքնուրույն և անկախ համաշխարհային կապիտալիզմի քառահաճույքներից:

Հնգամյակի հիմնական խնդիրն եր՝ վերածելով ԽՍՀՄ-ն ինդուստրիալ յերկրի, մինչև վերջը դուրս մղել կապիտալիստական տարրերը, ընդարձակել տնտեսութեան սոցիալիստական ձևերի ճակատը և տնտեսական բազա ստեղծել ԽՍՀՄ-ում դատակարգերը վոչնչացնելու համար, սոցիալիստական հասարակութուն կառուցելու համար:

Հնգամյակի հիմնական խնդիրն եր՝ ստեղծել մեր յերկրում այնպիսի ինդուստրիա, վորն ընդունակ լինել վերադիներ ու վերակազմել վոչ միայն ամբողջ արդյունաբերութեանը, այլև տրանսպորտը և դյուղատնտեսութեանը սոցիալիզմի բաղայի վրա:

Հնգամյակի հիմնական խնդիրն եր՝ փոխադրել մանր ու ցիրուցան դյուղատնտեսութեանը խոշոր կոլեկտիվ տնտեսութեան ու յետերի վրա, դրանով իսկ ապահովելով սոցիալիզմի տնտեսական բազան դյուղում և աշխարհով վերացնել ԽՍՀՄ-ում կապիտալիզմի վերականգնման հնարավորութեանը: Վերջապես՝ հնգամյա պլանի խնդիրն եր՝ ստեղծել յերկրում տեխնիկական ու տնտեսական բոլոր անհրաժեշտ նախագրայները յերկրի պաշտպանունակութեանն առավելագույն չափով բարձրացնելու համար, մի բան, վոր հնարավորութեան ե տալիս վճռական դիմադրութեան կազմակերպելու

գրուից ռազմական ինտերվենցիա կազմակերպելու բոլոր և ամեն տեսակի փորձերին» :

Ահա, ընկերներ, մեծ աշխատանքների սոցիալիստական պլանի, առաջին հնգամյակի հիմնական խմատը, կարևորագույն խնդիրը : Վճռել այդ խնդիրը՝ նշանակում էր միաժամանակ իրականություն դարձնել սոցիալիստական հեղափոխության, ինչպես Լենինն եր ընդգծում, «գլխավոր» խնդիրը, սոցիալիստական հասարակարգի հիմքը ստեղծել՝ այդ հիմքի վրա անդառակաբար սոցիալիստական հասարակութայն կառուցման գործին ձեռնարկելու համար :

Սոցիալիստական հասարակարգի տնտեսական հիմքերի կառուցման խնդիրը հիմնական այն խնդիրն է յեղել, վորով դբադվել է անընդհատ Լենինի հանձարեղ միտքը՝ մի խնդրը՝ վոր կարմիր թեկն նման անցնում է նրա կարևորագույն նախամտածումների և յերկերի միջով : Դեռևս 1917 թվին Լենինը գրում էր—«Պատերազմն անողոք է, նա հարցը դնում է անողոք սրուժյամբ՝ կամ կործանվել, կամ հասնել առաջավոր յերկրներին ու անցնել նրանցից նաև տնտեսապես : Կործանվել, կամ ամբողջ թափով առաջ սլանալ : Այդպես է գրել հարցը պատմությունը» :

1918 թվին Լենինը գրում էր, վոր «խնդիրը կայանում է նրանում, վորպեսզի նոր ձևով կազմակերպվի տասնյակ ու տասնյակ միլիոնավոր մարդկանց կյանքի ամենախոր, տնտեսական հիմքերը» և ընդգծում էր միաժամանակ, վոր սրանումն է կայանում «ամենաբարձր խնդիրը, վորովհետև միայն այդ խնդիրը վճռելուց հետո յե (հիմնական և գլխավոր գծերով), վոր հնարավոր կլինի ասել, թե Ռուսաստանը դարձավ վոչ միայն խորհրդային, այլ նաև սոցիալիստական հանրապետություն» : Տեսնում ենք այսպիսով, վոր սոցիալիստական հասարակարգի տնտեսական հիմքերի կառուցման խնդիրը գրել էր Լենինը դեռևս 1918 թվին . դեռ այն ժամանակ նա մշակում էր սոցիալիզմի կառուցման կոնկրետ պլանը : Քաղաքացիական վերահաս պատերազմները խանգարեցին պլանի անմիջական իրագործմանը . միջազգային իմպերիալիզմի և Ռուսաստանի կալվածատերերի ու կապիտալիստների հարվածներից խորհրդային հանրապետությունը պաշտպանելու համար կուսակցությունը գնաց ռազմական կոմունիզմի ուղիներով : Քաղաքացիական

պատերազմները հաղթանակով վերջացնելուց անմիջապես հետո կուսակցությունը, Լենինի ղեկավարությամբ կատարեց պատմական շրջադարձը, վոր հայտնի դարձավ նոր տնտեսական քաղաքականություն անունով : Ուշադրությամբ կարդացեք, ընկերներ, Լենինի այդ շրջանի յերկերը, և պարզ կտեսնեք, թե ինչպես, ձեռնարկելով նոր տնտեսական քաղաքականությունը, Լենինը վոչ մի բուպե աչքաթող չեր անում հիմնական խնդիրը,—վորի լուծմանը նա ծառայեցնում էր նոր տնտեսական քաղաքականությունը,—սոցիալիստական հասարակարգի հիմքերի կառուցման պայմանների ստեղծման խնդիրը : Նոր տնտեսական քաղաքականությունը սոսկ մի նահանջ չէր, ինչպիսի դնահատական նրան տալիս էին ռպորտունիստները, նա ժամանակավոր նահանջ էր, վորի իմաստն էր՝ պատրաստել բանվոր դասակարգի նոր հարձակողականը՝ ամբողջ Ֆրոնտով կապիտալիզմի դեմ հարձակողականը : Նոր տնտեսական քաղաքականություն լենինյան ըմբռնման լավագույն ձևակերպումը տվել է ընկ . Ստալինը : «ՆՆՊ—ը,—ասում էր ընկ . Ստալինը,—պրոլետարական պետության հատուկ քաղաքականությունն է, վորը նկատի ունի կապիտալիզմի թուլատրումը, պայմանով, վոր հրամանատարական բարձունքները պրոլետարական պետության ձեռքին գտնվեն, վորը նկատի ունի կապիտալիստական ու սոցիալիստական տարրերի պայքարը, վորը նկատի ունի սոցիալիստական տարրերի աճումը՝ ի վնաս կապիտալիստական տարրերի, վորը նկատի ունի սոցիալիստական տարրերի հաղթանակը կապիտալիստական տարրերի վրա, վորը նկատի ունի դասակարգերի վոչնչացումը, սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը : Ով չի հասկանում ՆՆՊ—ի այդ անցողիկ, յերկակի բնույթը՝ նա հեռանում է լենինիզմից» : Նույն ընկ . Ստալինն էր, վոր դեռ 1926 թվին, շարունակելով ու զարգացնելով Լենինի դրույթը սոցիալիզմի հիմքերի կառուցման մասին՝ չնչում էր, վոր «ստեղծել սոցիալիզմի տնտեսական բազան՝ նշանակում է համակցել գյուղատնտեսությունը սոցիալիստական ինդուստրիայի հետ՝ դարձնել նրանք մի ամբողջական տնտեսություն, յենթարկել գյուղատնտեսությունը սոցիալիստական ինդուստրիայի ղեկավարությանը, կազմակերպել քաղաքի ու գյուղի փոխհարաբերությունները՝ գյուղատնտեսության ու ինդուստրիայի սրտադրանքի ուղղակի փոխանակության հիման վրա, փակել և վերաց-

եւ այն բոլոր ուղիները, վորոնցով ծնվում են դասակարգեր և, նախ և առաջ՝ կապիտալը, ստեղծել, վերջիվերջո, արտադրութեան ու բաշխման այնպիսի պայմաններ, վորոնք ուղղակի և անմիջականորեն տանում են դեպի դասակարգերի վոչնչացումը»:

Թերթեցեք, վերջապես, ընկերներ, Լենինի կյանքի վերջին շրջանի մտքերը—նրա մահվան նախորդակին պատրաստված հոգվածները, և դուք կտեսնեք, վոր նրան դադարեցնող հիմնական միտքը՝ սոցիալիստական հասարակության տնտեսական հիմունքները կառուցումն է: Լենինը բազմաթիվ փոփոխակներով բազմաթիվ անգամ չեղտել է, վոր «քանի մենք ապրում ենք մանր գյուղացիական յերկրում, Ռուսաստանում կապիտալիզմի համար տնտեսական ավելի ամուր բազա կա, քան կոմունիզմի համար: Անհրաժեշտ է այդ հիշել: Գյուղի կյանքը քաղաքի կյանքի հետ համեմատելով, ուշադրութեամբ դիտող յուրաքանչյուր մարդ գիտե, վոր մենք կապիտալիզմի արմատները չենք վոչնչացրել և ներքին թշնամու հենարանը, հիմքը չենք խարխել: Վերջինս պահպանվում է մանր տնտեսութեան վրա և նրան վոչնչացնելու մի միջոց կա՝ փոխադրել յերկրի տնտեսութեանը, ներառյալ նաև հողագործութեանը, տեխնիկական նոր բազայի վրա, ժամանակակից խոշոր արտադրութեան տեխնիկական բազայի վրա: Յեւ միմիայն այն ժամանակ, յերբ յերկիրը ելեկտրիֆիկացիայի կենթարկվի, յերբ արդյունաբերութեան, գյուղատնտեսութեան ու տրանսպորտի համար կստեղծվի ժամանակակից խոշոր արդյունաբերութեան տեխնիկական բազան՝ միմիայն այն ժամանակ մենք կհաղթենք վերջնականապես»: Իր ամենավերջին հոգվածներից մեկում, առաջադրելով ամենապուր կերպով «խոշոր, մեքենայացված ինդուստրիայի զարգացման» խնդիրը, Լենինը գտնում է, վոր «հենց այդ և միայն այդ կլինի մեր հույսը: Այն ժամանակ մենք ի վիճակի կլինենք, պատկերապարհաբար, մի ձիուց նստել մյուսի վրա, այն է՝ գյուղացիական ռանչպարական, հալից ընկած ձիուց, քաջբայլած գյուղացիական յերկրի վրա հիմնված տնտեսումների ձիուց նստել այն ձիու վրա, վորը փնտռում է և չի կարող չփնտռել իր համար պրոլետարիատը, խոշոր մեքենայացված ինդուստրիայի, ելեկտրիֆիկացիայի, Վոլտապորոյի ձիու վրա»:

Տեսնում ենք այսպիսով, թե Լենինն ինչպիսի ուշադրութեամբ հիմնավորում և առաջադրում էր սոցիալիստական տնտեսութեան

հիմքերի կառուցման խնդիրը, վորպես այս շրջանի կոնկրետ խնդիր: Լենինի լավագույն ու հետևողական դործակիցն ու աշակերտը ընկ. Ստալինն էր, վոր շարունակելով և ճոխացնելով Լենինի հեղափոխական ուսմունքը, կարողացավ առաջնորդել կուսակցութեանը՝ ձեռք բերելու համար այսօր համաշխարհային պատմական այնպիսի մի նվաճում, վորպիսին է առաջին հնգամյակի հաջող կատարումը, և սոցիալիստական հասարակարգի ամուր հիմքի կառուցման ավարտումը: Հնգամյակի հաղթանակը այսպիսով, լենինյան մեծագույն ավանդների կատարումը յեղավ:

Առաջին հնգամյակի հիմնական ողակը, հատկապես ընդգծում է ընկ. Ստալինը իր գեկուցման մեջ, ծանր արդյունաբերութեան եր իր միջուկով՝ մեքենաշինութեամբ: Քանի վոր միմիայն ծանր արդյունաբերութեան և, վոր ընդունակ է վերակառուցել և վորքի կանգնեցնել ամբողջ արդյունաբերութեանը և տրանսպորտն ու գյուղատնտեսութեանը: Քանի վոր «սոցիալիզմի միակ նյութական բազան կարող է լինել մեքենայական խոշոր այնպիսի արդյունաբերութեան, վորն ընդունակ է վերակառուցելու գյուղատնտեսութեանը» (Լենին): Քանի վոր «առանց ծանր արդյունաբերութեան փրկելու, առանց նրա վերականգնման, մենք վոչ մի արդյունաբերութեան չենք կարող կառուցել, իսկ առանց նրա մենք ընդհանրապես կկործանվենք, վորպես ինքնուրույն յերկիր: Ծանր ինդուստրիան պետական նպաստներ է սպասում, և յեթե մենք չգտնենք վերջիններս, ապա մենք, վորպես քաղաքակրթ պետութեանը—եւ չեմ ասում վորպես սոցիալիստական,—կորած ենք» (Լենին):

Պարզ է այս բոլորից հետո, վոր կուսակցութեանը դավաճանած կլինեի իր նպատակին, յեթե չձեռնարկեի հնգամյա պլանի դործադրման, մասնավորապես և ամենից առաջ նրա հիմնական ողակի՝ ծանր ինդուստրիայի բարձրացմանը: Հեշտ խնդիր չէր առաջադրված խնդիրը: Կուսակցութեանը գիտեք այդ, ընկ. Ստալինը հրապարակով հայտարարում էր այդ մասին: Կապիտալիստական բոլոր յերկրների ինդուստրացման հիմնական աղբյուրը կազմել են ոտար փոխառութեանները և գաղութների կողոպուտը: Այդ աղբյուրները մեր յերկիրը չունեն և չեն կարող ունենալ: Մնում էր միակ ճանապարհը—ամբողջ հույսը դնել սեփական միջոցների վրա, վարել գերագույն տնտեսման քաղաքականութեան,

սկզբից ևեթ հանձն առնել լուրջ զոհաբերություններ, հաշտվել ժամանակավոր զրկանքների հետ, բայց հասնել նպատակին—վերացնել մեր յերկրի տնտեսական—տեխնիկական հետամնացությունը, ստեղծել խորհրդային իշխանության իրական ու վստահելի տնտեսական պատվանդան՝ հենված խոշոր արդյունաբերության վրա, վերակառուցել դյուղացիական մանր տնտեսությունը, ստեղծել խոշոր կոլեկտիվ դյուղատնտեսություն, վերացնել կուլակությունը վորպես դասակարգ, փչրել մեր յերկրում կապիտալիզմի վերականգնման բոլոր հնարավորությունները, բարձրացնել յերկրի պաշտպանունակությունը: Ահա բարդ ու դժվարին խնդիրների մի ամբողջ հանդույց: «Նիդախ խնդիր, դժվարին ուղի»—ասում է ընկ. Ստալինը: Բայց մեր կուսակցությունը հենց նրա համար էլ Լենինի կուսակցությունն է, վոր չվախենալով դժվարություններից, իր խիզախ առաջնորդ ընկ. Ստալինի ղեկավարությամբ, սերտորեն կապված իր դասակարգի հետ, գլխավորելով մասսաներին, անսահման հավատով լի դեպի բանվոր դասակարգի ուժերը, կարողացավ հաղթահարել բոլոր դժվարությունները և ավելի կարճ ժամանակամիջոցում, քան յենթադրում է—յինք հնգամյակը կազմելիս, ձեռք բերեց այնպիսի հաջողություններ և հաղթանակներ, վորոնք մեր խորհրդային յերկրի և միջազգային հեղափոխական պրոլետարիատի պարծանքն են կազմում: Կուսակցություն՝ ընկ. Ստալինի գլխավորությամբ կատարեց հնգամյակը չորս տարում:

Ընկերներ, հնգամյակի կատարման չորս տարվա արդյունքներն իրենց սպառնչ զնահատականը դտան ընկ. ընկ. Ստալինի Մոլոտովի և Կուրյուչեֆի՝ Համկոմկուսի Կենտկոմի և ԿՎՀ—ի հունվարյան պլենումին տված գեկուցումներում: Ընկ. Ստալինը վարպետ պարզությամբ ու հստակությամբ ցույց տվեց, թե ինչպես մեր յերկիրը, մի քանի տարի առաջ հետամնաց, ագրարային յերկիրը չորս տարվա ընթացքում, շնորհիվ կուսակցության լենինյան քաղաքականության, վերածվեց ինդուստրիալ յերկրի, թե ինչպես ստեղծվեցին և վտարի կանգնեցին արդյունաբերության կարևորագույն տասնյակ ու տասնյակ ճյուղեր, վորոնք հնգամյակից առաջ գոյություն չունեին մեր յերկրում, թե ինչպես արդյունաբերական բաղաժափով ճյուղերի գծով, յերբ նախքան հընգամյակը մենք գրավում էինք ամենահետին տեղերը ամբողջ

աշխարհում, այժմ դրավում ենք առաջին տեղը կամ առաջին տեղերից մեկն աշխարհում, թե ինչպես մենք ստեղծեցինք արդյունաբերության կարևորագույն ճյուղերի նորանոր բաղաներ այնպիսի մարդերում և յերկրամասերում, ուր առաջ «թագավորում էր նահապետականությունը, կիսավայրենությունը և ամենախակական վայրենությունը», թե ինչպես մենք կարողացանք միաժամանակ լրացնել մեր յերկրի պաշտպանության գործում գոյություն ունեցող բոլոր բացերը: Յեվ այս բոլորն այն ժամանակ, յերբ կարմիր գծից դուրս, կապիտալիստական բոլոր յերկրներում խորանում է դաժան կրիզիսը, քայքայվում է արդյունաբերությունը, չտեսնված տեմպով կրճատվում է արտադրանքի քանակը, փակվում են գործարանները, մարում են մետաղաձուլարանները մեկը մյուսի հետևից, հետադիմում է գիտություն ու տեխնիկան, նեխման ու քայքայման անդունդն է դահավիժում կապիտալիստական հասարակարգը: Ահա, թե ինչու այնքան գորեղ, այնքան խրոխտ հնչում է մեր առաջնորդի ձայնն ամբողջ աշխարհում—«արդյունաբերության կապիտալիստական սխտեմը քննություն չբռնեց խորհրդային սխտեմի հետ ունեցած մրցության մեջ»:

Ընկ. Ստալինն իր գեկուցման մեջ ցույց տվեց համաշխարհային պատմական այն նվաճումները, վոր ձեռք բերեց կուսակցությունը դյուղատնտեսության բնագավառում, իրադրծելով հնգամյակը չորս տարում: Կատարելով լենինյան պատգամները այս ասպարիզում՝ կուսակցությունը կարողացավ մի քանի տարվա ընթացքում մանր ու ցիրուցան տասնյակ միլիոն տնտեսությունների համախմբումով կազմակերպել ավելի քան 200,000 կոլեկտիվ տնտեսություն, կարողացավ ստեղծել 5000 խորհրդային տնտեսություն և 2500 մեքենա—տրակտորային կայան, ընդարձակել ցանքերի տարածությունը 21 միլիոն հեկտարով, բարձրացնել դյուղատնտեսության ապրանքայնությունը, կոլեկտիվացնել դյուղացիական տնտեսությունների 60 տոկոսից ավելին, ջախջախել կուլակությունը վորպես դասակարգ, ազատել դյուղի աշխատավորներին կուլակի լծից ու շահագործումից, վճռել «ով—ու՛մ» խնդիրը նաև դյուղատնտեսության մեջ: Յեվ այս բոլորն այն ժամանակ, յերբ կարմիր գծից դուրս, կապիտալիստական բոլոր յերկրներում դյուղացիությունն ապրում է դաժան ճգնաժամ,

կրճատվում է ցանքերի տարածությունը, կրճատվում է գյուղատնտեսական արտադրանքը, սնանկանում են հարյուր հազարավոր ու միլիոնավոր գյուղացիական տնտեսություններ: Բավական չէ՞ն այս բոլորը՝ յեղրակացնելու համար, վոր անվիճելի յե նաև գյուղատնտեսություն բնագավառում խորհրդային սիստեմի առավելությունները կապիտալիստական սիստեմի համեմատությունում:

Ընկեր Ստալինն իր զեկուցման մեջ ցույց տվեց նաև, թե ինչ բարենպաստ հետևանքներ ունեցան հնգամյակի կատարման արդյունքները բանվորների և գյուղացիների նյութական-կենցաղային դրուժյան բարելավման տեսակետից. խորհրդային Միության մեջ խաղաղ վերացավ դործադրկությունը, համարյա գյուղական վողջ չքավորություն ընդգրկումով կոտնտեսային շինարարություն մեջ՝ վերացավ կապիտալիստական շերտավորման պրոցեսը գյուղում, վոչնչացան գյուղի աղքատացման ու պառույթերից պատճառները, 1928 թվի համեմատությամբ կրկնապատկվեց ծանր արդյունաբերության մեջ աշխատողների թիվը, նույն համեմատությամբ 67 տոկոսով աճեց աշխատավարձը, զգալի չափով բարելավվեց աշխատավորական մասսաների (գյուղում և քաղաքում) տնտեսական, կենցաղային և կուլտուրական դրուժյունը: Յեվ այս բոլորն այն ժամանակ, յերբ կարմիր դժից դուրս, կապիտալիստական բոլոր յերկրներում, աներեւակայելի սարսափներ են ծավալվում գործադրկության հողի վրա, յերբ սովն ու թշվառությունը համակել են տասնյակ ու հարյուրավոր միլիոններ, յերբ չկա վորևէ վստահություն վաղվա որվա նկատմամբ, յերբ սխտեմատիկ կերպով կըրճատվում է բանվորների աշխատավարձը, յերբ սնանկանում են ու հողազրկվում միլիոնավոր ֆերմերներ, հետադիմում, վայրենանում են բարքերը: Կապիտալիստական յերկրներում մասսաների դժոխային դրուժյունը հաստատող պերճախոս փաստերը մի՞թե չեն ապացուցում այն, վոր անխուսափելի յե փակուղի մտած կապիտալիստական աշխարհի կործանումը, վոր անխուսափելի յե կոմունիզմի հաղթանակն ամբողջ աշխարհում:

Ընկեր Ստալինը մանրամասն վերլուծում է, վերջապես, այն արդյունքները, վոր ձեռք ենք բերել՝ կատարելով հնգամյակը չորս տարում՝ քաղաքի և գյուղի միջև դրուժյուն ունեցող ապրանքաշրջանառության բնագավառում: Արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքի վիթխարի աճումը, մասսաների սպա-

ռողական կարողություն աճումն առաջ բերին գյուղի և քաղաքի միջև ապրանքաշրջանառության աշխուժացում և ընդարձակում: Քաղաքի և գյուղի զուգման հիմնական ձևը՝ արտադրական զորումը, ինչպես նաև արտադրական զորումը լրացնող առևտրական, ապրանքային զորումը շատ ավելի ամրացրին քաղաքի և գյուղի կապը: Մենք ծավալեցինք խորհրդային առևտուրը, «վորն առևտուր է առանց փոքր ու մեծ կապիտալիստների, առանց փոքր ու մեծ սպեկուլյանտների, յուրահատուկ առևտուր, վորպիսին մինչև հիմա չի յեղել պատմություն մեջ և վորը գործադրում ենք միայն մենք, բայչևելիներս», խորհրդային զարգացման պայմաններում» . մենք դուրս շարտեցինք առևտրից մասնավորին, միջնորդներին, 1928 թ. համեմատությամբ 187%-ով աճեց թեթև արդյունաբերության արտադրանքը, նույն համեմատությամբ 175 %-ով աճեց մանրածախ առևտրի ապրանքային մասսան, ծավալվեց պետական-կոոպերատիվ առևտրի ցանցը: Յեվ այս ամենն այն ժամանակ, յերբ կարմիր դժից դուրս, կապիտալիստական բոլոր յերկրներում, կատաստրոֆիկ չափերով կրճատվում են առևտուրն ու ապրանքաշրջանառությունը, փակվում, քայքայվում, սնանկանում են փոքր ու միջակ առևտրականները լայն խավերը, անընդհատ ընկնում և աշխատավորական մասսաների դնողական կարողությունը: Կապիտալիստական աշխարհի և սոցիալիստական յերկրի հակադիր պատկերը նաև այս բնագավառում պերճախոս չափանիշն է յերկու ներհակ սիստեմների մրցության արդյունքների:

Այսպիսով, ընկերներ, տնտեսություն, հասարակական կյանքի ու կուլտուրայի վոր բնագավառն էլ վոր վերցնենք, պատկերը միևնույնն է. այստեղ՝ վերելք ու աճում, այնտեղ՝ անկում ու դահավիժում. այստեղ՝ մասսաների դրուժյան հարաճուն բարելավում, այնտեղ՝ մասսաների թշվառության չտեսնված սարսափներ, այստեղ՝ վաղվա ավելի վստ, ավելի փայլուն հեռանկարներ, այնտեղ՝ փակուղի և անվստահություն վաղվա նկատմամբ:

Հնգամյակի արդյունքները, այսպիսով, ի միջի այլոց, յեկան տապալելու «բուրժուական տնտեսադետները այն պնդումը, թե տնտեսություն կապիտալիստական սիստեմը լավագույն սխտեմն է, թե տնտեսության մյուս բոլոր սխտեմներն անկայուն են և անընդունակ՝ քննություն բռնելու տնտեսական զարգացման դրուժարությունների առաջ: Հնգամյակի արդյունքները ցույց տվին,

վոր տնտեսութեան կապիտալիստական սխտեմը սնանկ ե ու անկա-
յուն, վոր նա արդեն ապրել է իր դարը և իր տեղը՝ պետք է զինել
տնտեսութեան մի ալ, ավելի բարձր՝ խորհրդային սոցիալիստա-
կան սխտեմի, վոր տնտեսութեան այն միակ սխտեմը, վոր չի
վախենում ճշմարտից և ընդունակ է հաղթահարելու կապիտա-
լիզմի համար անհաղթելի դժվարութիւնները՝ դա տնտեսութեան
խորհրդային սխտեմն է» (Ստալին)։ Ահա, ընկերներ, առաջին
հնգամյակի կատարման, նրա հաղթական կատարման կարևորու-
թւոյն յեզրակացութիւններէից մեկը։

ՀՆԳԱՄՅԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Այժմ անցնենք, ընկերներ, առաջին հնգամյակի հիմնական
արդւոյունքներին Հայաստանում։ Խորհրդային Միութեան հնգամ-
յակի ընդհանուր արդւոյունքներն արդեն վորոչ չափով ընդողում
են այն, ինչ տվեց Խորհրդային Հայաստանին առաջին հնգամյակը։
Մեր յերկիրը Խորհրդային Միութեան անբաժան, բաղադրիչ մաս-
նիկն է։ Մեր տնտեսական ու կուլտուրական վերելքի ուղիները,
ինչպես արդեն բազմիցս շեշտել ենք, ընթանում են զուգահեռ
Խորհրդային Միութեան վերելքի ու շինարարութեան մեծ մագիս-
տրալներին՝ կազմելով նրանց հետ մի միասնական ամբողջութիւն։
Խորհրդային Հայաստանի հնգամյա պլանը միութենական ընդհա-
նուր պլանի բաղադրիչ մասն է։ Հօկայական այն տեղաշարժերը,
վոր կատարվեցին Խորհրդային Միութեան մեջ առաջին հնգամյակի
ընթացքում՝ վորպես հետեանք հնգամյա պլանի կատարման չորս
տարում՝ խոր ակոսներ բաց արին նաև Խորհրդային Հայաստանի
տնտեսութեան մեջ։ Յեթե վերջին չորս տարվա ընթացքում հիմնո-
վին փոխվեց Խորհրդային Միութեան տնտեսական-կուլտուրական
քարտեզը, ապա կատարված փոփոխութիւնները պակաս նշանա-
կալից չեն և այդ քարտեզի այն անկյունի վրա, վորտեղ ընկնում է
Խորհրդային Հայաստանը։ Այո՛, ընկերներ, վոր միայն բարեկամ-
ներն են տեսնում, մեր թշնամիներն անգամ անդոր են ալոր ժըխ-
տել հօկայական այն առաջադիմութիւնը, հրաշակերտ այն հեղա-
շրջումը, վոր կատարվեց մեր յերկրում, վորպես հետեանք առաջին
հնգամյակի հաջող ավարտման, վորպես հետեանք հնգամյակի կա-
տարման ու զերակատարման։

Վորո՞նք էյին, սակայն, հիմնական այն խնդիրները, վոր ա-

ռաջադրում էր Հայաստանի առաջին հնգամյակը։ Հնգամյակի
հիմնական խնդիրն էր՝ Հայաստանում հայտարարել մեր յերկրի
բնական հարստութիւնները, փոխադրել մեր հետամնաց, նահա-
պետական գյուղատնտեսական յերկիրն արդյունաբերական գար-
գացման ուղիների վրա։ Հնգամյակի հիմնական խնդիրն էր՝ Հայաս-
տանում առաջ մղել մեր յերկրի հետամնաց գյուղատնտեսութիւն-
ը, վորոքել ու ծաղկեցնել սննդի տարածութիւնները, գարկ տալ
բարձրարժեք տեխնիկական մշակույթների գարգացմանը, փոխա-
դրել մանր և ցիրուցան գյուղացիական տնտեսութիւնները խոշոր,
կոլեկտիվ տնտեսութիւնների ուղիների վրա։ Հնգամյակի հիմնա-
կան խնդիրն էր Հայաստանում՝ ընդարձակել տնտեսութեան սոցիա-
լիստական հատվածը, դուրս մղել կապիտալիստական տարրերը,
համընթաց առաջ շարժել հոբերդային Միութեան բոլոր մյուս ջո-
կատների հետ սոցիալիզմի կառուցման բոլոր նախադրումները։ Հըն-
գամյակի հիմնական խնդիրն էր Հայաստանում՝ գարկ տալ մաս-
սաների կուլտուրական վերելքին, ապահովել անող ու բարձրա-
ցող ժողովրդական տնտեսութիւնը վարակվոր, սեփական կադ-
րերով, բարելավել մասսաների նյութական-կենցաղային պայ-
մանները։

Մեր հնգամյակի այս հիմնական խնդիրները թելադրանք էյին
հետեյալ պահանջին՝ պատմականորեն ամենակարգ ժամանակամի-
ջոցում փաստորեն վերացնել տնտեսական-կուլտուրական այն
անհավասարութիւնը, վոր փրքե արդյունք ցարական Ռուսաստա-
նի քաղաքականութեան, գոյութիւն ունեւ մեր յերկրի, վորպես
նախկին գաղութի «ծայրամասի» և «կենտրոնների» միջև, ուրիշ
խոսքով՝ նախկին փնջված ու տիրող ազգութիւնների միջև, կարն
ժամանակում անցնելով այն ուղին, վորով հետ եմք մնացել Միու-
թեան առաջավոր մասերից, նրանց հասցնելով մեր յերկիրը։

Ահա, ընկերներ, Հայաստանի հնգամյակի առաջադրած հիմ-
նական խնդիրները. կարողացա՞նք արդյոք վճռել առաջադրված
խնդիրը. կատարեցի՞նք արդյոք հնգամյակը Հայաստանում նույն
հաջողութեամբ, ինչ հաջողութեամբ, վոր պահվեց Խորհրդային
Միութեան հնգամյակի ամբողջութեամբ։ Դիմելով թիւերի ու տըվ-
յալներին անաչառ փաստարկման՝ դալիս ենք այն յեզրակացու-
թեան, վոր հոբերդային Հայաստանի հնգամյա պլանը՝ իր հիմնա-
կան ցուցանիշներով կատարվեց, և կատարվեց նախնական յենթա-
դրութիւնից ավելի կարն ժամանակամիջոցում։

Սկսենք հիմնական ներդրումներից: 1923—28 թվերին, հինգ տարվա ընթացքում մեր յերկրի ժողովրդական տնտեսութան հիմնական ներդրումները կազմել են ընդամենը 69 միլ. ռուբլու գումար. համաձայն հնգամյա պլանի յենթադրվում էր, վոր այս հնգամյակում հիմնական ներդրումները կկազմեն 267 միլիոն ռուբլի, մինչդեռ 1928—32 թվերին, չորս տարվա ընթացքում, ավելի ճիշտը՝ չորս և մեկ քառորդ տարում, Հայաստանում իրացված է 311 միլիոն ռուբլի հիմնական ներդրումների գծով: Այսպիսով, տեսնում ենք, վոր ժողովրդական տնտեսութան հիմնական ներդրումների հնգամյա պլանը չորս և մեկ քառորդ տարում գերակատարվել է մոտ 18 տոկոսով: Միայն այս փաստը բավական է՝ ծիծաղելի դարձնելու համար դաշնականների միալար վայնասունը մեր հնգամյակի «ձախողման» մասին:

Սակայն, ի՞նչ անմիջական, չոչափելի արդյունք տվին իրացված ներդրումները: Ամենից առաջ, նրանք առաջ բերին վորակային մեծագույն տեղաշարժեր մեր ժողովրդական տնտեսութան մեջ. մինչև հնգամյակն արդյունաբերությունից գերեց բոլորովին գույժ մեր յերկրը ծածկվեց արդյունաբերական ձեռնարկությունների ավելի ու ավելի խտացող ցանցով: Առաջին հնգամյակի ընթացքում գործարկվեցին Հայաստանում 22 նոր արդյունաբերական ձեռնարկություններ: Գործարկվեցին 6 նոր հիդրոէլեկտրակայաններ — Իջևանի, Դիլիջանի, Գորիսի, Լենինականի, Յերևանի յերկրորդ կայանը, և, վերջապես առաջին հնգամյակի խոշորագույն ձեռնարկությունը՝ Զորադեսը: Եժան երեկտրական ուժի առատացող աղբյուրները կյանք ներշնչեցին բազմաթիվ արդյունաբերական նոր միավորների. առաջին հնգամյակի ընթացքում հայտաբերվեց Արթիկի տուֆը և կազմակերպվեց նրա արդյունահանությունը, գործարկվեց Լենինականի գործվածքային գործարանը, Յերևանի կոնսերվի գործարանը, Իջևանի ատոլձագործարանը, ստեղծվեց մարմարի և գրանիտի արդյունաբերությունը, Մահմուդջուղի պեմզան, կաուչուկեցին շինանյութերի մի շարք գործարանները և այլն: Բայց, արդեն խկ գործարկված միավորներով չի սպառվում առաջին հնգամյակի նշանակությունը մեր յերկրի արդյունաբերության դարգացման տեսակետից. բացի արդեն գործարկվածներից, առաջին հնգամյակի ընթացքում սկսեցինք յերեք նոր հիդրոէլեկտրակայանների և 24 նոր խոշոր գործարանային միավորների կառուցումը: Այդ

գործարանների մեծ մասը թևակոխել է արդեն գործարկման չորջանը և գործարկվելու յե 1933 թվի ընթացքում. վերջիններիս շարքին է պատկանում Ալլահվերդու պղնձաձուլարանը, Ղափանի Փլոտացիոն գործարանը, ցեմենտի գործարանը Դավալվում, Ղալաքիլիսայի քիմիոմրինատը, Յերևանի կարբիդի յերկրորդ գործարանը, Ալլահվերդու քիմիոմրինատը և այլն: Առաջին հնգամյակի արդյունքն են, վերջապես, Գանաքեռեսի հիդրոէլեկտրայանը, Սևան-Զանգվի սիստեմի առաջին աստիճանը, վոր ներկայումս մեր նոր շինարարության լայն ֆրոնտում խոշորագույն և կարևորագույն ձեռնարկությունն է: Հիշված ձեռնարկումները բավական են, ընկերներ՝, գաղափար կազմելու համար մեր յերկրի չափանիշով իրոք վոր հսկայական արդյունաբերական այն վերելքի մասին, վորի նմանը յերազել անգամ անհնարին էր վորևե ուրիշ պայմաններում: Այս ձեռնարկումներն իրոք վոր անձանաչելի յեն դարձնում մեր յերկիրը, փոխում են նրա տեսքն ու դեմքը: Ծիշտ է, մենք վորոշ չափով ուշացանք վերը հիշված գործարանների մեկ մասի գործարկման նախատեսված ժամկետներից: Այդ ուշացումն արդյունք էր մեկ կողմից պլանավորման թերությունների, — հնգամյակը կադմելիս վոչ միշտ նկատի էյին առնված անխուսափելի մի շարք դժվարություններ՝ կապված մեր յերկրի նման հետամնաց մի յերկրում տեխնիկայի վերջին խոսքի համաձայն խոշոր գործարաններ կառուցելու և գործարկելու բարդ խնդրի հետ, մյուս կողմից էլ աղղեցություն ունեցան նյութերի և մեքենայական սարքավորման ստացման մի շարք դժվարություններ՝ իբրև արդյունք այն հանգամանքի, վոր, ինչպես ընկեր Ստալինն և չեչտում, թնդանոթների վորոտը մեր Հեռավոր-Արևելյան սահմանների մոտ և միջադգային այլ բարդությունները պատճառ հանդիսացան, վորպեսպի յերկրի պաշտպանությունն ուժեղացնելու նպատակով մի շարք գործարաններ անցնեյին պաշտպանության ժամանակակից գործիքների արտադրությունը: Այս հանգամանքը, հասկանալի յե, չերկարող չանդրադառնալ մեր մի շարք նոր կառուցումները նյութերով ու սարքավորումով ժամանակին ապահովելու խնդրի վրա:

Մեր մի շարք նոր կառուցումների գործարկման ուշացումն իբ հերթին անդրադարձավ, իհարկե, արդյունաբերության ընդհանուր արտադրանքի հնգամյա պլանի կատարման վրա: Սակայն այս չե հիմնականը. հիմնականն այն է, վոր մենք ստեղծել ենք արդեն

առցիալիզմի ամուր արդյունաբերական պատվանդան Հայաստանում, վոր սոցիալիստական առաջին հնգամյակի կատարումով առաջ յեկան մեր յերկրում այնպիսի տեղաշարժեր՝ վորոնց գումարը հանդիսանում է մեր յերկրի, խորհրդային Հայաստանի վերածումը՝ հետամնաց, գուտ ագրարային յերկրից ինդուստրիալ-ագրարային յերկրի։ Ահա առաջին հնգամյակի հիմնական արդյունքը, մեր խոշորագույն հաղթանակը։ Թող ինչքան ուղում են վայրահան ջեն մեր թշնամիները հնգամյակի «ձախողման» մասին։ Մեր յերկրի, ընկերմեք, իրոք դարձել է արդեն արդյունաբերական-ագրարային յերկիր, վորովհետև արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը ժողովրդական ընդհանուր տնտեսության մեջ գյուղատնտեսական արտադրանքի նկատմամբ, հնգամյակի չորրորդ տարում հասավ 52,4 տոկոսի, 1927-28 թ. 29 տոկ. փոխարեն։ Հետևանքը յեղավ մեր արդյունաբերության արտադրանքի իսկապես վոր հսկայական աճումը. 1927-28 թվին, առաջին հնգամյակի նախադրանք, Հայաստանի վողջ արդյունաբերությունը տվել է 25 միլ. 800 հազար ռուբլու արտադրանք, իսկ 1932 թվին՝ հնգամյակի չորրորդ տարում, մեր արդյունաբերության արտադրանքը կազմում է 102 միլիոն 546 հազար ռուբլի (յերկու թվերն էլ 1926-27 թ.թ. անփոփոխ դնելով)։ Հնգամյակի չորս և մեկ քառորդ տարում մեր արդյունաբերության ընդհանուր արտադրանքը յեղել է 303 միլ. ռուբլի, ըստվորում արտադրանքի հնգամյա պլանը չորս և մեկ քառորդ տարում կատարվել է մոտ 85 տոկոսով։ Մասնակի թերակատարումն արդյունք է դործարկման մեջ ուշացած միջանի ձեռնարկությունների դժով նախատեսված արտադրանքը չստանալու։ Բայց այդ թերակատարումը, վորի հիմնական պատճառների մասին խոսեցինք վերը, յերբեք չի կարող նույն մասնակի հսկայական այն թուլեքը, վոր կատարեց յերկրաբանական արդյունաբերությունն առաջին հնգամյակի ընթացքում։ չորս ու մեկ քառորդ տարվա ընթացքում մեր արդյունաբերությունն ավելի քան քառապատկեց իր արտադրանքը։ Թող փորձեն ցույց տալ մեր թշնամիները պատմության մեջ արդյունաբերության զարգացման նման տեմպ վորեւե այլ յերկրում։ Կարիք կա՞ ավելի մանրամասն կանգ առնելու արդյունաբերության առանձին ճյուղերի առաջընթացի վրա՝ հնգամյակը չորս տարվա ընթացքում։ Չնայած առանձին թերակատարումներին, մեր արդյունաբերության բոլոր

ճյուղերը միջանի տարում կատարեցին հսկայական առաջխաղացում. պղնձարդյունաբերության դժով 1932 թվին՝ հնգամյակի չորրորդ տարում, ստացանք 3.832 տոնն պղինձ՝ 1927-28 թվի 2.488 տոննի փոխարեն. տեքստիլի դժով 1932 թվին ստացանք 2.147 տոնն մանվածք՝ 1927-28 թ. 352 տոննի փոխարեն, 8 միլ. 600 հազար մետր գործվածք՝ 2 միլ. 200 հազար մետրի փոխարեն և 297 տոնն տրիկոտաժ՝ 32 տոննի փոխարեն։ Կոնսերվի արդյունաբերությունը 1932 թվին տվեց 13 միլիոն տուրից ավելի կոնսերվ, մինչդեռ հնգամյակի նախադրանքը Հայաստանի տարեկան արտադրանքը կազմել է մեկ միլիոն տուրի միայն։ Միսխտի գործարանը 1927-28 թվին արտադրած 40 միլիոն դրանակի փոխարեն 1932 թվին տվեց 565 միլիոն դրանակ և այլն, և այլն։ Կարելի չէ չարունակել այս համեմատությունների շարանը, բայց բավական է։ Բերած փաստերը կասկած չեն թողնում, վոր անփոփոխ յեն մեր խոշորագույն հաղթությունները յերկրի ինդուստրացման ուղղությամբ։ Չորս տարվա ընթացքում շնորհիվ կուսակցության լեգիոն քաղաքականության՝ հետամնաց ու նախադրանքական մեր յերկրը քուլիգ կատարեց՝ փոխադրվելով արդյունաբերական արտադրանքի գաղափարով ռեյսերի վրա—ահա Հայաստանի հնգամյակի հիմնական արդյունքը արդյունաբերության բնագավառում։

Վերցնենք հնգամյակի չորս տարվա արդյունքները գյուղատնտեսության բնագավառում։ Այստեղ նույնպես հսկայական են՝ կատարված վերակառուցողական աշխատանքները, խոշոր են ձեռք բերված նվաճումները։ Գյուղատնտեսության հիմնական ներդրումները հնգամյա պլանը չորս և մեկ քառորդ տարում գերակատարված է 18 տոկոսով, ջրային տնտեսությանը՝ 6 տոկոսով։ Ցանքերի ընդհանուր տարածությունը Հայաստանում հնգամյակի չորրորդ տարում կազմում է մոտ 400 հազար հեկտար 1927 թվի 322 հազար հեկտարի փոխարեն։ Չորս տարվա ընթացքում կրկնապատկվել է տեխնիկական բարձրարժեք մշակութային տեսակարար կշիռը ցանքադաշտերի ընդհանուր տարածության մեջ։ 1928 թվի 179 քառակուսի փոխարեն՝ 1.800 ձիու ուժով՝ 1932 թվին ունեյինք 520 քառակուսի՝ 7.200 ձիու ուժով։ Գյուղատնտեսական մեքենաների ներմուծման հնգամյա պլանը չորս և մեկ քառորդ տարում գերակատարված է 92 տոկոսով. պլանով նախատեսված 3,5 միլիոն ռուբլու մեքենաների փոխարեն Հայաստանի գյուղն այս չորս

(տարվա ընթացքում ստացել է 6,5 միլ. ռուբլու գյուղատնտեսական մեքենա: Նախքան հնգամյակը, գյուղատնտեսության ամենատարածված գործիքը նահապետական չուխն էր: Չորս տարվա ընթացքում կատարելագործված գուլթանը գրեթե իսպառ դուրս է մղել չուխը մեր գյուղացու արտերից: Սերմադալիչը, քամհար մեքենան, խոտհոնձ, խրճկապ մեքենաները, կալիչը, տրակտորը և այլն վերջին տարիներում լայն տարածում ստացան մեր գյուղում: Քայքայ ամենից կարևորը սոցիալիստական այն տեղաշարժերն են, վար առաջ յեկան գյուղում՝ հնգամյակի չորս տարվա ընթացքում. կուսակցությունը կարողացավ հսկայական չափով լայնացնել գյուղատնտեսության սոցիալիստական հատվածը, առաջ մղել գյուղի զարգացումը սոցիալիստական ուղիներով: Մեր գյուղական տնտեսությունների 38 տոկոսն ամրացավ վերջին 2—3 տարիներում կազմակերպված կոլեկտիվ տնտեսությունների մեջ: Հայաստանում կազմակերպեցինք մեքենատրակտորային 7 կայան, վորոնք գյուղի սոցիալական ու տեխնիկական վերակառուցման հզոր լծակներն են հանդիսանում. կազմակերպեցինք խորհրդային 61 տնտեսություն, մեծ մասամբ նոր վոտգվող հողամասերի և ալպյան մասսիվների վրա: Կազմակերպված այդ տնտեսությունները, հաղթահարելով սկզբնական դժվարությունները՝ ամուր վոտքի յեն կանգնում. հզոր խթան հանդիսանալով գյուղատնտեսության արտադրողական ուժերի բուռն աճման համար: Լայնացնելով գյուղում սոցիալիզմի բազան, լայնացնելով գյուղատնտեսության սոցիալիստական հատվածի ֆրոնտը, մենք կարողացանք ջախջախել հուլակությունը, — թեև նա դեռ վերջնականապես վոջնչացված չէ, — ազատել աշխատավոր գյուղացիներին նրա լծից ու շահագործումից: 1928 թ. կես տոկոսի փոխարեն, 1932 թ. գյուղատնտեսության սոցիալիստական հատվածը բռնում է ցանքերի ընդհանուր տարածության 40 տոկոսից ավելին. իսկ տեխնիկական մշակույթների դժով՝ ցանքերի տարածության 64 տոկոսը:

Սհա, ընկերներ'ր, հնգամյակի չորս տարվա հիմնական արգյունքները գյուղատնտեսության բնագավառում: Բերած թվերը, իհարկե, չեն սպառում գյուղի սոցիալիստական վերակառուցման կենդանի, բաղմակողմանի ու բաղմերանգ պատկերը. ո՞վ չգիտե, վոր մեր այսօրվա գյուղի և նախահնգամյակյան գյուղի միջև խոր միհ կա, վոր իր տնտեսական ու կուլտուրական մակարդակով անց-

ցալի գիրկն է անցնում յերեկվա նահապետական, խալար ու թշվառ գյուղը, վոր «գյուղացիության հսկայական մեծամասնությունը գիտակցության մեջ կոլտնտեսությունները դարձել են տնտեսության ամենից ընդունելի ձևը», վոր կուլակության ջախջախումով վերջիվ են կապիտալիզմի վերականգնման հնարավորությունները, վոր կոլտնտեսական գյուղն առաջ է շարժվում և առաջ է սլանալու պատմության մեջ աննախընթաց տեմպերով: Միայն բանվոր դասակարգի թշնամիները, բացարձակ հակահեղափոխականներն են, վոր կարող են շողալրաոել գյուղում մեր աշխատանքների ու կոլեկտիվացման «ձախողման» մասին: Կատարելով գյուղատնտեսական հնգամյակը՝ մենք ամուր ու անսասան դարձրինք մեր հենակետերը գյուղում, նրանց վրա հենված շարունակելու և ավելի բարձր աստիճանի հասցնելու համար գյուղի սոցիալիստական վերակառուցման աշխատանքներն առաջիկայում:

Անհետևանք չանցավ հնգամյակը մեր յերկրի ճանապարհների և հաղորդակցության դործում, յերկրի բնական հարստությունների լայն ֆրոնտով հետադոտման դործում: Բավական է ցիայն հիշել, վոր 5—ամյակի ընթացքում կառուցվեցին ու դործարկվեցին Լենինական—Արթիկ, Արթիկ—Մահմուդջուղ, Ղափան—Միջևիան, Անի—Պեմդա յերկաթուղագծերը, վերջացան Յերևան—Ալտաուրա յերկաթգծի հետադոտման, նախագծման և ուղեգծման աշխատանքները, կառուցվեց և դործարկվեց Յերևանի տրամվայը, հայտարեվեցին և հետադոտվեցին Ադարակի պղնձահանքերը, գիտական—տեխնիկական իմաստով դրականապես վճռվեց Սեանի պրոբլեմը և այլն, և այլն: Հիշված պրոբլեմներից ամեն մեկը լայն հնարավորություններ է բաց անում մեր յերկրի հետագա զարգացման համար:

† Վերցնենք, ընկերներ'ր, հնգամյակի հիմնական արգյունքները բանվորների և աշխատավորական մասսաների նյութական—կենցաղային դրության բարելավման բնագավառում: Ո՞վ է, վոր հիշամարձակվի Ժխտել իրապես վիթխարի այն վերելքը, վոր ունենք մասնավորապես այս ասպարիզում: Դաշնակների արտասահմանյան թերթերի անդոր վնդստոցը, կոթանիլող կուլակության, շահագործող ելեմենտների, բուրժուական ինտելիգենցիայի հակահեղափոխական կոկոռները կարո՞ղ են արդյոք ամենավորը չափով անդամ նսեմացնել կուլտուրական—տնտեսական հոյակապ այն վե-

բերելը, վոր բերեց Հայաստանի բանվորների և աշխատավորական
ժառանգների համար առաջին հնգամյակը: Ինչո՞ւ և բնորոշ այդ
վերելքը: Ամենից առաջ մեր յերկրի ազգաբնակչության հարածուն,
ուրազ ու առողջ/ավելացմամբ: 1928 թվի 922-800 ազգաբնակչու-
թյան փոխարեն, ունենք արդեն մեկ միլիոն 124 հազար ազգաբնա-
կուցի: Ավելի մեծ արագություն աճում և քաղաքային ազգու-
բնակչությունը: 1928 թ. 180-967 մարդու փոխարեն, ներկայումս
ապրում են մեր քաղաքներում 264-100 հոգի: Մեր աչքերի առաջ
աճում, վերակառուցվում, խակալան քաղաքներ են դառնում Յե-
րեանն ու Լենինականը: Բանվորական առաջնակարգ, կուլտուրա-
կան ավաններ են դառնում Ալյահվերդին, Ղափանը, Ղարաբլիկ-
աան: Ամայի դաշտերում բարձրացան այս հնգամյակում Անին ու
Արթիկը, մեր նորակառույց բանվորական ավանները, կառուցվում
և լավ հեռանկարներով Նոր-Սարդարաբադը, կառուցվում են մի
չարք գյուղական նոր ավաններ, իսպառ վերացել և գործադրու-
թյունը մեր յերկրում: Շարունակվում և բանվորների քանակի
արագատեմպ աճումը, 1927—28 թվին վարձով աշխատող 45-400
հոգու փոխարեն՝ ներկայումս վարձով աշխատողների քանակը
հասել է 98-600 հոգու՝ ավելի քան կրկնապատկվելով չորս տարում:
Միայն ցենզային արդյունաբերության դժով այդ նույն ժամանա-
կաշրջանում յերկու և կես անգամ աճել և բանվորների թիվը՝
6-340 հոգուց հասնելով 15-400 հոգու: Աճել և բանվորների միջին
աշխատավարձը հնգամյակի չորս տարում՝ 183 տոկոսով: Բայց
միայն աշխատավարձի աճմամբ չի սպասվում բանվորների և աշ-
խատավորների նյութական-կենցաղային դրուժյան բարելավման
աստիճանը. պետք և ավելացնել դրան խոշոր այն ձեռնարկումնե-
րը, վոր կատարել ենք առաջին հնգամյակում՝ սոցիալական ապա-
հովադրության, առողջապահության, բնակարանային շինարա-
բության, հանրային սննդի և այլ դժերով: Անժխտելի յե, ընկեր-
ներ, հսկայական այն առաջադիմությունը, վոր ունենք առաջին
հնգամյակում՝ մասսաների նյութական դրուժյան բարելավման
ուղղությամբ, և վոչ միայն քաղաքում, այլ նաև գյուղում: Հա-
մեմատեցեք, ընկերներ, այսօրվա կոլտնտեսականի դրուժյունը,
իսկ կոլտնտեսություններն ընդգրկել են, կարելի յե ասել, գյուղ-
ական վոզը չքավորությունը, — գյուղական չքավորության դրու-
թյան հետ մի քանի տարի սրանից առաջ. սար ու ձոր տարբեր

թյուն կա կոլտնտեսություններում բարեխղճորեն աշխատող, կար-
գապահ կոլտնտեսականի դրուժյան, նրա ապրուստի, հագուստ-
կապուստի և յերեկվա չքավոր դյուղացու դրուժյան միջև, վոր
դուրի եր կայուն տնտեսությունից, գյուղատնտեսական ինվենտա-
րից, ամեն տարի մի քանի ամիս սոված, իսկ ընդհանրապես կիսա-
կուշտ կյանք եր վարում կուլակի շահագործող լծի տակ: Նույնը
վերաբերում է նաև միջակ գյուղացուն, վորն, անկասկած, վորպես
կոլտնտեսական՝ ավելի կայուն ու բարեկեցիկ դրուժյան մեջ և,
իհարկե, բարեխիղճ աշխատելու պայմանով, քան աշխատելու
տնտեսատիրոջ դրուժյան մեջ: Ահա, ընկերներ, հնգամյակի հիմ-
նական արդյունքները բանվորների և գյուղացիների դրուժյան
բարելավման ուղղությամբ:

Այդ արդյունքների հետ սերտորեն կապված են կուլտուրական
հեղափոխության խոշոր հաջողությունները: Տնտեսական աճման
կայուն հիմքերի վրա առաջին հնգամյակում չտեսնված աշխուժաց-
ման, բուռն ծաղկման շրջանը թեև ակոխեցին կուլտուրական շինա-
րարության աշխատանքները: Առաջին հնգամյակն ամենից առաջ
մեր յերկրում անդրադիտության վրա մասսայական դրոժի, ան-
դրադիտության վերացման շրջանը յեղավ: Յեթե 1926 թ. մեր
յերկրում 8 տարեկանից բարձր ազգաբնակչության մեջ դրաժնե-
ները կաղմում եյին 35 տոկոս, ապա 1932 թ. դրաժետների տոկոսը
բարձրանում է մինչև 81-ի: Մեր յերկիրը դառնում է իրապես հա-
մատարած դրադիտության յերկիր դառնալու չեմքին: Առաջին
հնգամյակը հանրային պարտադիր կրթության կիրառման շրջան
հանդիսացավ: Մեր յերկրում դպրոցական կայուն ցանցով ընդ-
գրկված են դպրոցական վորոշ հասակի բոլոր յերեխաները, և
սա առաջին հնգամյակի կուլտուրական շինարարության մեր խո-
շորագույն հաջողությունը պետք և համարել: Առաջին հնգամյա-
կը հսկայական դարկ տվեց սեփական կադրերի լայն շերտեր
պատրաստելու աշխատանքներին: Կարիք չկա մանրամասն թվեր
բերել մեր ուսումնական բարձր հիմնարկների, տեխնիկումների,
աստիճակ ու հարյուրավոր ամեն տեսակ կուրսերի աշխատանքների
մասին: Առանց չափազանցության կարելի յե ասել, վոր առաջին
հնգամյակը վերածեց մեր յերկիրը վոչ միայն մի հսկայական
գործնական աշխատանքի, ուր յեռում եր և յեռում և աշխատանքն
ամեն քայլափոխում, այլև դարձրեց մեր յերկիրը հսկայական մի

գարաց: Գաղաքներում և գյուղերում՝ մեր ինտրիտուտներում, անխնայություններում, բանֆակներում, պատրաստման և վերապատրաստման կուրսերում, ֆաբրիկաներում, խորհրդակցություններում և կոլտնտեսություններում, կոմսոմոլի, կանանց կազմակերպությունների գծով, կարմիր բանակում, տարրական և միջնակարգ դպրոցներում, անգրագիտության վերացման խմբակներում, բանվորական ակումբներում, խրճիթ-ընթերցարաններում, նախադպրոցական ցանցում, պրոֆմիություններում քրտնաջան աշխատանքով և աշխատանքին զուգընթաց՝ ուսման և լծվել մեր աշխատավորական յերկիրը, սովորում, վորակավորվում են բոլորը, փոքրից մինչև մեծը: Ահա, ընկերներ, առաջին հնգամյակի մեծագույն նվաճումներից մեկը:

Վերջապես, առաջին հնգամյակի կատարման չորս տարում չտեսնված ծաղկման շրջանը թևակոխեցին ձևով աղագային, բովանդակով ճյուղերը: Խոր արմատներ ե արձակում մեր խորհրդային դրականությունը, Պետական Հրատարակչությունն ընդարձակում ե որեցոր իր հրատարակչությունների ծավալը, բարձրացնում վորտեղ, մայրենի լեզվով մեր մասնանների սեփականությունն ե դարձնում բանվոր դասակարգի մեծ ուսուցիչների յերկերն ու՝ դործերը, մարդկային գիտություն դասական կարևորագույն դործերը, հայ, ռուս և ոտար գրականության դասական յերկերը: Ընդարձակվել ե թատրոնների ցանցը, կադակերպվեց հայկական առաջին ուսերան, վորոշ արդյունքներ ունենք նույնպես զուտ գիտական հետազոտական աշխատանքների գծով: Ահա հնգամյակի չորս տարվա կատարման հանրագումարները կուլտուրական շինարարություն ընդգրկում:

Յես աշխատեցի, ընկերներ, ընդհանուր գծերով միայն ուրվագծել Խորհրդային Հայաստանի անցած ուղին՝ հնգամյակի չորս տարվա ընթացքում: Հայաստանի բանվորներն ու աշխատավորները, վորոնք այնքան մեծ յեռանդով ու վորակորություն մար կոմունիստական կուսակցության ղեկավարություն մար հաղթանակելով դժվարությունները, իրականություն դարձրին առաջին հնգամյա պլանը՝ կկատարեն առաջին հնգամյակի մեր պայքարի և շինարարությունի մանրամասն հանրագումարներ: Սեփական վորձով, դասակարգային հոտակատեսություն մար նրանք տեսնում են, զգում

և չափում հնգամյակի արդյունքները բոլոր բնագավառներում: Տեսնում են այն նորը, վոր հաստատվեց մեր կյանքում առաջին հնգամյակի իրագործմամբ, այն նորը, վոր վոչ միայն քանակով ե չափվում, այլ նոր վորակ մտցրեց հասարակական կյանքի բոլոր բնագավառներում: Հայաստանի բանվորները և աշխատավորները լավ գիտեն, վոր մեր հաջողություններն ու նվաճումներն արդյունք են կուսակցության լենինյան գծի անշեղ կիրառման:

Առաջին հնգամյակի մարտերից մենք դուրս յեկանք հաղթանակով, վորովհետև ընթանում ենք լենինյան ուղիով, բարձր պահած լենինյան դրոշը:

Առաջին հնգամյակի մարտերից մենք դուրս յեկանք հաղթանակով, վորովհետև բանվոր դասակարգի պայքարը ղեկավարում եր մեծ Լենինի մեծ ղեկակցը, մեր առաջնորդ Ստալինը:

Ստալինի ղեկավարություն մար, անաղարտ պահելով լենինյան սվանդները, բարձր պահելով Լենինի դրոշը՝ մենք թևակոխում ենք յերկրորդ հնգամյակը:

ՀՆԳԱՄՅԱԿԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆ — ՊԼԱՆԻ ՈՒՂԻ

Ընկերներ, մենք ուրվագծեցինք առաջին հնգամյակի հիմնական արդյունքները: Այդ արդյունքները ձեռք են բերվել վոչ ինքնահոսի կարգով, վոչ ել «խաղաղ» աշխատանքի պայմաններում. նրանք արդյունք են ոուր և անընդհատ դասակարգային պայքարի, նրանք ձեռք են բերված դասակարգային դուր մարտերում: Ով այդ չի հասկանում՝ նա բացարձակապես վոչինչ չի հասկացել մեր դարգացման և առաջնագացման պրոցեսներից:

Հնգամյակի կատարման յուրաքանչյուր թիղ հողը բանվոր դասակարգը ձեռք ե բերել կուսակցության ղեկավարություն մար առանհատ, կատաղի պայքարի միջոցով, ջախջախելով ու դուրս վանելով կապիտալիստական ելեմենտներին: Կուսակցության լենինյան ղլխավոր գիծը հաղթանակեց, վորովհետև կուսակցություն իր լենինյան ղեկավարություն մար կարողացավ ջարդուղիչաբանել դասակարգային թշնամուն, նրա զանազակցներին ու դործակալներին, վորովհետև նա անհատ պայքար եր մղում յերկու Քրոտի վրա՝ ալ կապիտալիստների դեմ, վորոնք փաստորեն

դասակարգային թշնամիներն բանակը մտան, և աջերն դաշնա-
կիցներն՝ այսպես կոչված «ձախ» ուղորտունիստների դեմ: Հըն-
դամյակի իրականացման համար մղված դասակարգային բոլոր
մարտերում բացառիկ և կուսակցութեան առաջնորդ ընկեր Ստա-
լինի պատմական դերը:

Հետևենք պայքարի հիմնական ողակներին:

Յոթը տարի առաջ: Կուսակցութեան 14-րդ համագումարը:
Զինովյեվի ու Կամենևի ուղղության, Տրոցկու փաստական դաշ-
նակիցները պայքարի դուրս յեկան կուսակցութեան լենինյան
քաղաքականութեան դեմ, այդ քաղաքականութեան հիմնական ու-
ղակի, յերկրի ինդուստրացման դեմ, փորձեցին «ապացուցել» մեկ
յերկրում սոցիալիզմի կառուցման անհնար լինելը: Այսոր խուլերն
անդամ լսում են, թե վո՛ր դասակարգի յերգերն եյին յերգում ս-
ոցիալիզմի դեկլարները: Այսոր բոլորն ել տեսնում են, վա՛ր
սպագիցիայի ուղեգիրն տանում եր դեպի մեր յերկրի դադութա-
ցումը, մեր յերկրի վերածումը՝ փաստորեն կապիտալիստական
յերկրների ազդարային կցորդի, դեպի կապիտալիզմի վերականգ-
նումը մեր յերկրում: Կուսակցութունը ջարդուխուր արեց
սոցիալ-դեմոկրատական այդ աղենտներին և խիզախ ու անշեղ
բռնեց յերկրի ինդուստրացման քաղաքականութունը: Այդ քա-
ղաքականութեան դեմ դուրս յեկան ալ կապիտուլյանտները, կու-
լակութեան փաստաբաններն ու պաշտպանները: Մի՞թե կարելի չե
մոռանալ կատաղի այն գրոհը, վոր ալ ուղղեցին՝ կատարելով
կուլակի դասակարգային պատվերը՝ ձեռնարկեց մեր հնգամյա
պլանի դեմ, այն պայքարը, վոր մղեցին ալ կապիտուլյանտները՝
ձախողելու համար հնգամյակը: Կուսակցութունը կարողացավ
ջախջախել նաև ալ ուղորտունիստների կուլակային դիմադրու-
թյունը և փառավոր հաղթանակով պսակել իր առաջին լողունը՝
յերկրի ինդուստրացումը: Այդ քաղաքականութեան՝ ինդուստրաց-
ման արդյունքներն այսոր հրապարակի վրա յեն և այնքան պեր-
ճախոս ըստ ելութեան, վոր խոսքերն ավելորդ են նրանց գնահա-
տութեան համար: Բայց յերևակայեցե՛ք մի բոպե, թե ինչ կստաց-
վեր, յեթե հաղթանակեր ուղղեցիան, յեթե կուսակցութունն ս-
մուր բազուկներով առաջ չմղեր յերկրի ինդուստրացման գործը:
Խորհրդային Միութեան անդեն ու անպաշտպան կլիներ միջադ-
դային խմբերխալիզմի հորդանների առաջ, մենք անդեն կլինեյինք

նոր տեխնիկայով զինված կապիտալիստական շրջապատում: Մենք
անդոր կլինեյինք տեխնիկական բազա ստեղծել՝ վերակառուցելու
համար դյուղատնտեսութունը, մենք հնարավորութուն չեյինք
սեննա դուրս մղել և ջախջախել կապիտալիստական տարրերը:
Մեր յերկրը շատ ավելի վատ դրութեան մեջ կլիներ, քան Զինա-
տանը, անխուսափելի կլինեյին ռազմական գրոհներ մեր անդեն
յերկրի վրա ու կապիտալիզմի վերականգնումը մեր յերկրում:
«Իրեն հարգող իշխանութունը, իրեն հարգող կուսակցութուն-
ը, — չեչտում ե ընկեր Ստալինը, — չեր կարող կանգնել այդպիսի
կորստարեր տեսակետի վրա: Յեվ հենց վորովհետև կուսակցու-
թյունը մերժեց այդպիսի հակահեղափոխական դիրքավորում,
այդիսկ պատճառով նա վճռական հաղթանակ տարավ արդյու-
նաբերութեան հնգամյա պլանի կատարման գործում»: Մնում ե,
սակայն, ավելացնել, վոր տարված հաղթանակը մենք ամենից
առաջ պարտական ենք ընկեր Ստալինի հեռատեսութեանը, նրա
խիզախ ու յերկաթե կամքին, նրա լենինյան դեկլարութեանը:

Կուսակցութեան 15-րդ համագումարը: Հենվելով ինդու-
ստրացման հաջողութունների վրա՝ կուսակցութունը հրապարակ
ե նետում մասսայական կոլեկտիվացման լողունը՝ կուսակցու-
թյունը ձեռնարկում ե մանր ու ցիրուցան անատեսութուն-
թյունների միացմանը, խոշոր, հանրայնացված տնտեսութուն-
ների կազմակերպման պատմական գործին: Կուսակցութունը
պայմաններ ե ստեղծում՝ կուլակութեան լիկվիդացիային ձեռ-
նարկելու համար: Կուսակցութեան այս քաղաքականութեան դեմ
ձառանում են հակահեղափոխական տրոցկիստները, ալ ուղորտու-
նիստները: Ուղորտունիստների պայքարը կուսակցութեան դեմ
ձայր աստիճանի սրութեան ե հասնում: Չե՞ վոր նրանք արձագան-
քում եյին իր որհասն ապրող կուլակութեան մահամերձ ջղաճգու-
թյուններին: Կուսակցութունը, ընկեր Ստալինի առաջնորդու-
թյամբ, ջախջախում ե ուղորտունիստների դիմադրութունը և
առաջ մղում դյուլի կոլեկտիվացման քաղաքականութունը: Այդ
քաղաքականութեան արդյունքները հրապարակի վրա յեն: Բայց
յերևակայեցե՛ք մի բոպե, թե ինչ կստացվեր, յեթե հաղթանակե-
յին տրոցկիստական հակահեղափոխականները կամ ալ կապի-
տուլյանտները. կուլակութեան աճում ու կապիտալիզմի ամրա-
ցում մեր յերկրում. կուլակը քաղցի վոսկրոտ ճանկերով կըռնեք

քանվոր դասակարգի բերք. մեր արդյունաբերությունը կաթվա-
ճահար կլինեն՝ չստանալով անհրաժեշտ քանակությունը հումք.
պրոլետարական հեղափոխության յերկիրը կապիտուլյացիայի
կենթարկվելու կուլակի, ապա այդպիսով՝ միջազգային իմպերիա-
լիզմի առաջ: Կուսակցությունը ջախջախեց տրոցկիստներին և
աջ-պարտավորականներին՝ փակելով մեր յերկիրում կապիտալիզմի
վերականգնման բոլոր դռները: Յեվ համաշխարհային պատմական
այս հաղթանակը մենք ամենից առաջ պարտական ենք կուսակցու-
թյան լենինյան ղեկավարությունը, ընկ. Ստալինի հմուտ, լե-
նինյան առաջնորդությունը:

Տրոցկիստները, աջերը, «ձախերը», ամեն տիպի ու դուշնի
դավաճաններն անվերջ աղմկում էին առաջին 5-ամյակի տեմպի
դեմ, ձգտում էին իջեցնել տեմպը՝ կատարելով կուլակի պատ-
վերը, վոր ձգտում էր հետաձգել իր կործանման ժամը: Կուսակ-
ցությունն առաջին 5-ամյակում առաջ էր տանում և՛ արդյունա-
բերություն, և՛ դուրստնտեսություն ընադավառում ամենատարազ
անմպի քաղաքականությունը: Ծի՞շտ էր արդյոք այդ քաղաքա-
կանությունը: «Այո, անպայման ճիշտ»,—պատասխանում է ըն-
կեր Ստալինը,—չի կարելի առաջ չմղել այն յերկիրը, վոր հետ է
մնացել հարյուր տարով, և վորին նրա հետամնացություն պատ-
ճառով մահացու վտանգ է սպառնում: Միմիայն այդպիսով կարե-
լի յեր հնարավորություն տալ յերկրին՝ արագորեն վերադիմելու
յու նոր տեխնիկայի բազայի վրա, և դուրս դալ, վերջապես, լայն
ճանապարհ: Յեթե, չնորհիվ ամենաարագ տեմպի քաղաքականու-
թյան կիրառման, յերկիրը դուրս է յեկել արդեն լայն ճանա-
պարհ՝ ապա այդ ամենից առաջ չնորհիվ կուսակցության և նրա
առաջնորդի լենինյան քաղաքականություն:

Տրոցկին, հակահեղափոխական սոցիալ-դեմոկրատական վո-
լախում իր իսկական «եյությունը» դրած Տրոցկին, պնդում էր,
թե անհնարին է սոցիալիզմի կառուցումը մի յերկրում: Նա ից
այդ տեսակետով «հիմնավորում էր» մեր յերկրի անխուսափելի
կապիտուլյացիան կապիտալիստական շրջապատի առաջ: Կուսակ-
ցությունը ջախջախեց Տրոցկու հակահեղափոխական վայնա-
սուները: «Հնդամյակի արդյունքները ջախջախեցին սոցիալ-դեմո-
կրատների այն թեզը, թե մի առանձին վերցրած յերկրում հնա-
քավոր չի սոցիալիզմ կառուցել: Հնդամյակի արդյունքները ցույց

տվին, վոր միանգամայն հնարավոր է սոցիալիստական հասարա-
կություն կառուցել մի յերկրում, քանի վոր այդպիսի հասարա-
կության տնտեսական հիմքն արդեն կառուցվել է ԽՍՀՄ-ում»
(Ստալին): Մարքս-լենինյան այս հիմնական ճշմարտության տե-
սական ու դործնական հիմնավորումը և հաղթանակը պարտական
ենք ամենից առաջ մեր առաջնորդին՝ ընկ. Ստալինին:

Կարիք կա՞ յերկար կանգ առնելու դասակարգային թշնամու
դիմադրության մյուս արտահայտությունների վրա՝ ուղղված մեր
ոոցիալիստական համահարձակողականի դեմ: Միջազգային իմ-
պերիալիզմը «ստորերկրյա» դասակարգային կապերով կապված
յերկրում կապիտալիստական ելեմենտների հետ ի՞նչ միջոցների
ասես, վոր չդիմեց՝ ձախողելու համար 5-ամյակը: Ինտերվեն-
ցիայի պատրաստումը և անվերջ դավեր մեր սահմանների վրա,
հակահեղափոխական վնասարարություն լայն կազմակերպու-
թյունը, հակահեղափոխական, բուրժուական ինտելիգենտների
դավադրությունները, Ֆինանսական բլոկադա, «դեմպինգի» թրմ-
բուկը, չհարձակման պայմանագրերի կնքումից հրաժարվելը,
դիվերսիոն դործողությունները և այլն, և այլն—այս բոլորը մի
ընդհանուր շղթայի անբաժան ողակներ են: Իրավ, վոր հին աշ-
խարհի բոլոր ուժերը, «բոլոր շներն ու խոզերը» սրբազան դաշ-
նակցություն կնքեցին 5-ամյակի դեմ, բայց խորհրդային մեր
յերկիրը միջազգային հեղափոխական պրոլետարիատի աջակցու-
թյամբ իդերև հանեց թշնամու բոլոր հույսերը: Հնդամյակը
հաղթանակեց: Հաղթանակեց պայքարի միջոցով: Այդ հաղթանա-
կը մենք պարտական ենք «բանվորների ու կուտնտեսականների
միլիոնավոր մասսաների ակտիվությունն ու անձնավորությունը»,
այդ հաղթանակը մենք պարտական ենք կուսակցության և նրա
ղեկավարի հաստատուն ղեկավարությունը:

Վերջենք, ընկերներ, հնդամյակի պայքարի Հայաստանի
ֆրոնտը: Այստեղ նույնպես հնդամյակի արդյունքները ձեռք են
բերվել անընդհատ պայքարի միջոցով, պայքարի՝ աջ ուսուրու-
նիստների և «ձախ» քյալլադյոդների դեմ, պայքարի՝ հակահեղա-
փոխական տրոցկիզմի դեմ, կուլակների ու նրանց պաշտպանների
դեմ, հայկական նացիոնալիստների և մեծապետական չովինիստ-
ների դեմ, հակահեղափոխական, բուրժուական ինտելիգենտների
դեմ (կոնդրատեականներ և այլն), վնասարարների դեմ և, իհար-

գե, դաշնակները՝ իմպերիալիստական բանակի այդ վարձկան շնե-
րի դեմ: Աշխատանքի և շինարարութեան վրձն բնագավառում ել
վոր վերցնենք, մեր առաջնադասական յուրաքանչյուր քայլը կա-
տարված է թշնամի ուժերի կատաղի դիմադրութիւնը կտորե-
լուց հետո: Մանավանդ կատաղի դիմադրութիւնն ցույց է տալիս
մեզ դասակարգային թշնամին դուռը սոցիալիստական վերակա-
ռուցման ֆրոնտում՝ լավ դեպքով, վոր կուլակութեան ջախջա-
խումբով և վերացումով վոջնչանում է կապիտալիզմի, հայ բուր-
ժուազիայի վերջին դասակարգային հենակետը մեր յերկրում:
Հայտնի յե կուլակների պայքարը տեխնիկական մշակութիւնների
դեմ, կուլակների, մի շարք բուրժուական «մասնագետներին» պայ-
քարը բամբակի տարածման դեմ՝ Հայաստանում: Հայտնի յե, վոր
դաշնակ թափթփուկներն իրենց ձեռքին յեղած բոլոր միջոցներով
անխտիր՝ փորձեցին կազմակերպել կուլակութիւնը, պրովոկա-
ցիայի յենթարկել աշխատավոր դուռը սոցիալիստներին, կասեցնել դուռը
աշխատավորներին մասսայական հոսանքը դեպի կոլտնտեսու-
թիւնները, տերրորի յենթարկելով նրանց: Հայտնի յե, վոր
Նրանք, մանավանդ 1930—31 թվերին, փորձեր արին կազմակեր-
պելու կուլակային-բանդիտական խմբեր՝ զինված ուժով պայ-
քարելու համար մեր ձեռնարկումների դեմ: Դաշնակների արտա-
սահմանյան Բյուրոյի բանդիտական այդ «գործունէութեան»
վրայից վարագույրի մի ծայրը բարձրացրին վերջերս դաշնակնե-
րի Յեվրոպայի Կենտկոմի անդամները, վորոնք Բյուրոյի կողմից
վտարվել են Դաշնակցութիւնից և կազմակերպել «Բողոքող դաշ-
նակցականներին» մի կազմակերպութիւն: «Բողոքող դաշնակ-
ցականներին» մերկացումներից հետո Բյուրոն շտապեց հրապարակ
դալ «հերքումով»: Միծաղելի քայլ. վոր միամիտին են ուղում
խաբել այդ արիւնները, ո՞վ չգիտե, վոր նրանց գոյութեան և
գործունէութեան միակ նպատակն է՝ առանց միջոցների խտրու-
թեան պայքարել բանվոր-դուռը սոցիալիստական Խորհրդային Հայաս-
տանի դեմ հանուն բուրժուական Հայաստանի, հանուն իմպերիա-
լիստական դադութ Հայաստանի: Յեթե այդ այդպէս չլիներ,
ինչո՞ւ պիտի կերակրեյին Վրացյանի վոհմակին հայ բուրժու-
ազիան և իմպերիալիստական պետութիւնների զինվորական
շտաբները լրտեսական բաժինները: Ուրիշ խնդիր է, վոր իրենց
բոլոր դավերով և բանդիտներով դաշնակներն անգոր են Հայաս-

տանի բանվորները և աշխատավոր դուռը սոցիալիստ-
կան հարձակման դեմ, անգոր են կասեցնել դուռը սոցիալիստ-
կան վերակառուցումը մեր յերկրում: Կուլակութեան ջախջախու-
մով փշրվել է դաշնակների վոդնաշարը: Սոցիալիզմի կառուցման
հաջողութիւնները Խորհրդային Հայաստանում ամբացնում են մեր
դիրքերը նաեւ կարմիր գծից դուրս: Անհուսալի յե դաշնակներ
այստրվա որը, ավելի վատ է լինելու վաղը:

Այո, ընկերներ, պայքարի և միայն պայքարի միջոցով է,
վոր Հայաստանի բանվորները և աշխատավորները չորս տարվա
քնթացքում փոխեցին մեր յերկրի դեմքը, ձեռք բերին իրենց
պատմական հաջողութիւնները: Պայքարի, սուր դասակարգային
պայքարի միջոցով էր, վոր ինչպէս վողջ Խորհրդային Միւռ-
թեան մեջ, նմանապէս և մեզ մոտ, «իրենց հունից դուրս գցվե-
ցին մեռնող դասակարգերի վերջին մնացորդները, ջախջախվեց
կուլակութիւնը և հող պատրաստվեց նրա վերջնական վոջնչաց-
ման համար»:

Սակայն անթույլատրելի, ճակատագրական սխալ կլիներ այո
փաստից այն հետեութիւնն անել, թե դասակարգային թշնամու
ջախջախումով այժմ ինքնին վերանում է դասակարգային պայ-
քարը: Վո՞չ, ընկերներ: Ովքեր այդպէս են մտածում, նրանք չեն
կարող ունենալ վորեւեւ առնչութիւն մեր կուլակցութեան հետ:
Դրանք այլասերվածներ են կամ յերկերեսանիներ, ասում է ընկ.
Ստալինը և պահանջում է դուրս վոնդել նրանց կուլակցութեան
շարքերից: Դասակարգային պայքարը շարունակվում է, փոխ-
վում են միայն թշնամի դասակարգերի մնացորդների պայքարի
ձեւերը մեր սոցիալիստական հառաջնադասական դեմ: Մեր թշնա-
միները, իրենց անտեսական հունից դուրս գցված մեռնող դասա-
կարգերի վերջին մնացորդներն անկարող են, իհարկե, բացճա-
կատ դրոհի դիմել մեր դեմ: Բայց կան պայքարի ուրիշ ուղիներ.
թաղուն վնասարարական աշխատանք, կոլտնտեսութիւնների և
խորհտնտեսութիւնների դուրքի վիչացում, հրկիզում և մանա-
վանդ՝ սոցիալիզտական սեփականութեան, պետական, կոոպե-
րատիվ, կոլտնտեսային դուրքի վատնում, գողութիւն, հափշտա-
կութիւն: «Նախկին» մարդկանց «գործունէութեան» մեջ գլխա-
վորն այսոր վերջին ձեւն է: Մեր թշնամիներն իրենց վնասարար-
կան աշխատանքի համար ամեն կերպ աշխատում են ողտադուր-

ծել կոլտնտեսականներին, յերեկվա մանր սեփականատերերի մասնավոր սեփականատիրական բնադրներն ու սովորութիւնները: Չե՞ վոր, ինչպէս ընկեր Ստալինն ե չեշտում, «կոլտնտեսականներն իրենց դրութեամբ այլեւ մենատնտեսներ չեն, այլ կոլեկտիվիստներ, սակայն նրանց դիտակցութիւնն առայժմ դեռ հինն ե, մասնավոր սեփականատիրականը»: Յե՞վ մեր թշնամիներն ոգտւում են, շահագործում են կոլտնտեսականի մասնավոր սեփականատիրական ձգտումները՝ կազմակերպելու համար հանրային գույքի վատնում ե փչացում, խախտելու համար մեր նոր իրավակարգի տնտեսական պատվանդանը՝ հանրային սեփականութիւնը: Նախեցեք, ընկերներ, ձեր չորս կողմը՝ մի՞թե ամեն քայլափոխում մենք չենք նկատում դասակարգային թշնամու ակտիվութիւնն ու կատաղի պայքարն այս ուղղութեամբ: Մի՞թե մեր գրեթե բոլոր չրջաններում տարածված կոռուքիատիւններից, խորհրտնտեսութիւններից, կոլտնտեսութիւններից, պետական պահեստներից կատարվող գողութիւնների, հափշտակումների դասակարգային սատարը կուլակի պայքարը չե՞ մեր դեմ: Խնդիրն այն ե, վոր, ինչպէս չեշտում ե ընկ. Ստալինը, մեր ընկերներից շատերը չեն նկատում այս յերեւոյթների դասակարգային աստուր, չեն հասկանում մասսայական գողութեան ե վատնումների իմաստն ու նշանակութիւնը: Նույնիսկ խորհրդային իշխանութեան հայտնի որենքի հրատարակումից հետո ել՝ հանրային գույքի պահպանման, սոցիալիստական սեփականութեան սրբադան ե անձեռնմխելի լինելու մասին՝ տեղերում մեր ընկերներից շատերը չեն հասկացել, վոր «այդ որենքը ներկա մոմենտին հանդիսանում ե հեղափոխական որինականութեան հիմքը» (Ստալին): Մինչդեռ կոմունիստների ամենախոքը «բարեհոգութիւնն» անգամ այս խնդրում համահավասար ե դասակարգային հավկուրութեան ե դավաճանութեան: Մեր ամենահիմնական խնդիրներից մեկն ե ներկայումս՝ իրապես ուժեղացնել պայքարը՝ պահպանելու ե ամբողջնելու համար հանրային սեփականութիւնը:

Իսկ դրա համար անհրաժեշտ ե պրոլետարիատի ուժեղ ու հզոր դիկտատուրա, «վորպեսզի մենք ջարդուփչուր անենք մեռնող դասակարգերի վերջին մնացորդները ե ջախջախենք նրանց գողունի մեքենայութիւնները»: Ընկեր Ստալինի պատմական զեկուցման ամենակարեւոր մասերից մեկն այն ե, ուր նա դնում

ե պրոլետարիատի դիկտատուրայի ուժեղացման ե հզորացման պահանջը. «մի քանի ընկերներ դասակարգերի վոչնչացման, անդասակարգ հասարակութեան կառուցման ե պետութեան մահացման թեղերը հասկացել են վորպէս ծուլութեան ե բարեհոգութեան արդարացում, վորպէս՝ դասակարգային պայքարի մարելու ե պետական իշխանութեան թուլանալու հակահեղափոխական տեսութեան արդարացում»: Զարդուփչուր անելով հակահեղափոխական ե այլասերման արտահայտութիւն հանդիսացող նման մտքեր, ընկեր Ստալինը չեշտում ե, վոր «դասակարգերի վոչնչացումը դուրս ե բերվում վոչ թե դասակարգային պայքարի մարումով, այլ նրա ուժեղացումով: Պետութեան մահացումը վրահանելի վոչ թե պետական իշխանութեան թուլացումով, այլ նրա առավելագույն ուժեղացումով»: Պրոլետարական դիկտատուրայի ուժեղացում՝ ահա կուսակցութեան կարեւորագույն պահանջը: Վորո՞նք են պրոլետարական դիկտատուրայի հիմնական բնորոշիչ գծերը: Յե՞վ Լենինը, ե՛ ընկեր Ստալինը, վորոնց մենք պարտական ենք Մարքսի ուսման այս կարեւորագույն կետի մշակումը ե պարզաբանումը, ամէլ են պրոլետարական դիկտատուրայի դադարի պատիւ ձեւակերպումներ: Հիշենք ընկերներ Ստալինի հեռեկալ դասական ձեւակերպումը: Ի՞նչ ե պրոլետարիատի դիկտատուրան. վորոնք են պրոլետարական դիկտատուրայի հիմնական կողմերը: Ընկեր Ստալինը պատասխանում ե. —

«1. Պրոլետարիատի իշխանութեան ոգտագործումը՝ ճնշելու շահագործողներին, պաշտպանելու յերկիրը, ամբացնելու կապը մյուս յերկրների պրոլետարների հետ, բոլոր յերկրներում զարդացնելու ե հաղթութեամբ պսակելու հեղափոխութիւնը:

2. Պրոլետարական իշխանութեան ոգտագործումը՝ աշխատավոր ե շահագործվող մասսաները վերջնականապէս պոկելու բուրժուազիայից, ամբացնելու պրոլետարիատի դաշինքն այդ մասսաների հետ, ներգրավելու այդ մասսաները սոցիալիստական շինարարութեան մեջ, այդ մասսաներին պրոլետարիատի կողմից պետական ղեկավարութիւն ցույց տալու համար:

3. Պրոլետարական իշխանութեան ոգտագործումը՝ կազմակերպելու սոցիալիզմը, վոչնչացնելու դասակարգերը, առանց

դասակարգերի և առանց պետութեան հասարակութեան անց-
նելու համար:

Պրոլետարական դիկտատուրան այս բոլոր յերեք կողմերի
միացումն է: Այս յերեք կողմերից վոչ մեկը չի կարելի առաջ
մղել իրեն պրոլետարիատի դիկտատուրայի միակ բնորոշ
հատկութիւնը, և ընդհակառակն, հերիք ե, վոր բացակայի
այս հատկութիւններից մեկը, վորպեսզի կապիտալիստական
չըջապատման պայմաններում պրոլետարիատի դիկտատու-
րան դադարի դիկտատուրա լինելուց»:

Պրոլետարիատի դիկտատուրայի այս «կողմերը», նրա թե՛
«ճշդողական» և թե՛ «կազմակերպչական» փունկցիաներն անհրաժեշտ
և ամեն բոլոր նկատի ունենալ՝ վորպես ղեկավար սկզբունք մեր
պայքարի բոլոր ֆրոնտներում: Չպիտի մոռանալ, վոր սոցիա-
լիստական հարձակման հարաճուն ծավալը, մեր պետութեան
գործողութեան ամուսն ուժեղացնելու յե մեռնող դասակարգերի
մնացորդների մահամերձ դիմադրութիւնը: «Որհասական տրեւ-
րի» նման, թշնամի դասակարգերի մնացորդներն ուժեղացնում են
իրենց դիմադրութիւնը, անցնում են դիմադրութեան ամբողջ սուր
ձևերի՝ «հենվելով աղգարնակութեան հետամնաց խափերի վրա և
մոբիլիզացիայի յենթարկելով նրանց՝ խորհրդային իշխանութեան
դէմ»: Այդ հոդի վրա, նախադրույցնում է ընկեր Ստալինը,
«կարող են աշխուժանալ և շարժվել հակահեղափոխական հին
կուսակցութիւնների՝ եսերների, մենչևիկների, կենտրոնի և
ծայրերիկների բուրժուական նացիոնալիստների ջախջախված
խմբակները: Կարող են աշխուժանալ և շարժվել հակահեղափո-
խական, ողողիցիոն տարրերը, տրոցկիստների և աջ ուկլոնիստ-
ների բանակից: Այդ սուրբատիւնի չե, իհարկե, սակայն այդ բոլորը
պետք է աչքի առաջ ունենալ, յեթե մենք ուզում ենք արագորեն և
առանց առանձին դահերի վերջ տալ այդ տարրերին: Ահա, թե
ինչու «հեղափոխական զգաստութիւնը հենց այն հատկութիւնն
է, վորն այժմ առանձնապէս կարևոր է բայլչեիկների համար»:

Այսպէս ուրեմն, ընկերներ, պրոլետարական դիկտատուրայի
հզորութեան ե՛լ ամբողջ ուժեղացում, հեղափոխական զգաստու-
թեան ե՛լ ամբողջ բարձրացում—այս հրամայական պահանջներով
է, վոր թեւակոխում ենք յերկրորդ հնդամյակի առաջին տարին:

1933 ՏԱՐՎԱ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ընկերներ, մենք թեւակոխել ենք յերկրորդ սոցիալիստական
հնդամյակի առաջին տարին: Այս տարվա համակուսակցական ընդ-
հանուր խնդիրները դստան նույնպէս իրենց ապուրչ բնորոշումը
Յենտիոմի և կենտրոնական վերահսկիչ Հանձնաժողովի վերջին
պլենումում: Թույլ տվեք, այդ պատճառով, հակիրճ բնութագրել
այն հիմնական խնդիրները, վորոնք 1933 թվին դրվում են մեր
առաջ՝ վորպէս Համկոմկուսի Հայաստանի ջոկատի: 1933 թվի մեր
աշխատանքների ծրագիրը հենվում է նվաճումների այն գումարի
վրա, վորով թեւակոխեցինք յերկրորդ հնդամյակը: Ընդհանուր
գծերով յես արդեն բնութագրեցի այդ նվաճումները: Յեթե
միաժամանակ յես կանգ չառա թերութիւնների և պակասութիւն-
ների վրա, ապա այդ վոչ այն պատճառով, վոր թերութիւններ
և պակասութիւններ չկան մեր աշխատանքներում: Վո՛չ, ընկեր-
ներ: Նրանք կան, նրանցով խոշոր չափով պայմանավորվում են
մի շարք թերացումներ ու ճեղքվածքներ, վոր ունեցանք առաջին
հնդամյակի կատարման առանձին ճյուղերում: Վերացնել այդ
թերութիւնները, վերացնել մեր աշխատանքներում հետամնացու-
թիւնը՝ փոխանակ հարմարվելու նրան, վերացնել պայքարի մի-
ջոցով «նեղ տեղերը»—փոխանակ հարմարվելու նրանց—ահա խըն-
դիրը:

Սկսենք արդիւնաբերութիւնից: Առաջին հնդամյակը մեր
յերկիրը դարձրեց արդիւնաբերական—աղբարային յերկիր: Խոշոր
այս նվաճումն արդիւնք է շինարարական այն ջոհանված վողեո-
րութեան, կառուցողական այն պաֆոսի, վորով համակվեցին մաս-
նաւոր առաջին հնդամյակում: Ո՞վ չզիտե իրոք հերոսական
այն պայքարի մասին բարձր տեմպի համար, վոր ծավալվեց Հա-
յաստանի մեկ ծայրից մյուսը, մեր գործարանների, մեր ջրանցք-
ների շինարարութեան ֆրոնտում, Զորագետում, Ղափանում, Գա-
նաքետում, Լենինականում, Արթիկում, Յերեւանում: Հիրավի,
պրոլետարական անսուղտ յեռանդի, բարձր վողեոթութեան, կա-
ռուցողական պաֆոսի փայլուն որինակներ տվին բանվորական
և աշխատավորական մասսաները Հայաստանում: Բայց կառուցո-
ղական աշխատանքների բարձրութեան վրա չեյին դրված մինչեւ
այժմ կառուցված գործարանների տեխնիկական—տնտեսական և

արտադրական լրիվ իրացման աշխատանքները: Առաջին հնդամ-
յակում ավարտված ու գործարկված գործարանների, ջրանցքների
և այլ միավորների մի մասը դեռ հեռու յե լիակատար բեռնվա-
ծությամբ աշխատելուց, նախադրված պլաններով սպասվող ար-
դյունքը տալուց: Որինակ՝ Լենինականի գործվածքայինը, Այդը-
լճի և Սարգարաբաղի ջրանցքները, Ղափանի յերկաթուղին և այլն:
Այդ իսկ պատճառով հիմնական խնդիրն այն է, — այդպես է դնում
հարցն ընկ. Ստալինը, — վոր բարձր պահելով մասսաների կառու-
ցողական պափոսը, միաժամանակ առաջ բերենք նույն ծավալի
ու նույն բարձրության նոր պափոս, վոգևորության նոր ալիք,
նոր գործարանների լրիվ յուրացման, լրիվ բեռնավորման համար,
նոր գործարանների, շախտերի, ջրանցքների, ելեկտրոկայանների
լրիվ իրացման պափոսը: Այս է խնդիրը և այս խնդիրը պետք է
մինչև վերջը լուծվի. բարձրացնել բանվորական նոր կազմերի վո-
րակալութունը, իրապես տիրանալ մեր գործարանների նոր տեխ-
նիկային, առաջ բերել բոլոր բանվորների մեջ հոգատար ու սրտա-
ցավ վերաբերմունք դեպի գործարանը, նրա սարքավորումը, դեպի
պլանների անպայման լրիվ կատարումը — ահա մեր հիմնական ա-
նելիքը ներկայումս:

Վորակ, աշխատանքի արտադրողականության բարձրացում,
արտադրանքի ինֆնարժեքի իջեցում — սիւս յերեք կարևորագույն
լուգունգների միասնության, վորին բայլելիկորեն պիտի ձգտեն
մեր բոլոր տնտեսական միավորները, մեր բոլոր կազմակերպու-
թյունները: Պետք է ընդունենք, վոր հատկապես այս կարևորա-
գույն խնդիրների լուծման գծով զրուծյունը, անշուշտ, անբավա-
րար էր անցյալ տարի: Պլանավորապես չնորհիվ վատորակ դեկա-
վարության ու աշխատանքի, մենք չկարողացանք ինքնարժեքի ի-
ջեցման գծով կատարել անցյալ տարվա պլաններով նախատեսված
ցուցանիշները: Ընդհակառակը, մեր գործարանների մի մասն
ինքնարժեքի իջեցման փոխարեն՝ անցյալ տարի նույնիսկ մի քիչ
հետ դնաց այս ցուցանիշով զրավված դիրքերից: Հանդուրժել
նման յերևույթ՝ այս տարի չի կարելի և վոչ մի դեպքում: Կաս-
կածից դուրս է, վոր մեզ մոտ դեռ հսկայական են աշխատանքի
արտադրողականության բարձրացման հնարավորությունները.
իսկ ներկայումս ԳԼԽԱՎՈՐՆ աշխատանքի արտադրողականու-
թյան բարձրացումն է: Թող չափազանցություն չթվա, յեթե ա-

սեմ, վոք դործարանների աշխատանքների բարեկարգման, նոր
սարքավորման լրիվ բեռնվածության, սոցմրցման ավելի բայն ծա-
վարման դեպքում հնարավոր է Հայաստանում միջին հաշվով 40
տոկոսով բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը:
Յեվ այդ պահանջը 1933 թվին մենք դնում ենք Հայաստանի ար-
դյունաբերության առաջ՝ հաստատ համոզված լինելով, վոր
բարձրացնելով աշխատանքային կարգապահությունը, բարձրաց-
նելով սոցմրցումը, հարվածայնությունը նոր, ավելի
բարձր աստիճանի, խոստով կիրառելով թորհրդային իշխանու-
թյան, պրոլետարական դիկտատուրայի որենքները և այդ որենք-
ների տրամադրած միջոցները՝ աշխատանքից խուսափողների,
հանրային արտադրությունը խախտողների դեմ, բարեկալելով
աշխատանքի կազմակերպման գործը և բարձրացնելով տնտեսա-
կան կյանքի բոլոր ողակների պատասխանատվությունը՝ պիտի
կարողանանք կատարել այն:

Մինչև վերջերս՝ շատ տեղերում արմատավորվում էր այն
յերևույթը, յերբ տնտեսական ձեռնարկության աշխատանքը դնա-
հատում է յին՝ յեղնելով պլանների կատարման քանակական ցուցա-
նիշներից, անտես անելով արտադրանքի վորակը, նրա ինֆնարժե-
քը: Հանդուրժել նման յերևույթ 1933 թվին չենք կարող: Յուրա-
քանչյուր տնտեսավար, մասնագետ, վարպետ, բանվոր և կուսաշ-
խատող պետք է հասկանա, վերջապես, վոր կուսակցությունը պա-
հանջում է նրանցից վոչ միայն կատարել ծիսխոտի կամ, որինակ՝
կոնսերվի գործարանի պլանի կատարումը քանակով, այլ նաև
բարձրացնել ծխախոտի, կոնսերվի, բյազի, կաշու, տպագրվող
զրքի, կարվող հագուստի վորակը, յերբեք չխախտելով ինքնար-
ժեքի այն նորմաները, վոր սահմանվում են յուրաքանչյուր գոր-
ծարանի ամեն մեկ արտադրանքի համար: Այսպիսով, 1933 թվի
պլանների կատարումը զնահատելու յենք՝ միաժամանակ նկատի
ունենալով արտադրանքի քանակը, վորակը և ինքնարժեքը:

Ինչ վերաբերում է 1933 թվի մեր արդյունաբերական արտա-
դրանքի ծրագրին, տպա նախատեսվում է, վոր մեր արդյունաբե-
րությունն անցյալ տարվա մոտ 100 միլիոն ռուբլու արտադրանքի
փոխարեն, 1933 թվին պետք է տա 146 միլիոն ռուբլու արտա-
դրանք: Արտադրանքի ամման այս տեմպը, իհարկե, շատ է բարձր,
բայց իրագործելի յե, նկատի ունենալով, վոր մեր խոշոր գոր-

ծարանների մի ամբողջ շարք գործարկվելու և արտադրանք է տալու 1933 թվին:

Ընկերներ, յես արդեն ասացի, վոր առաջին հնգամյակից յերկրորդ հնգամյակն անցան՝ սկսված, կիսավարտ կամ ավարտման նախորդակին գտնվող քանից ավելի, մեծ մասամբ խոշորագույն նորակառույցներ: Բնական է, վոր այդպիսի պայմաններում 1933 թվի համար շինարարության գծով նոր միավորներ չենք առաջադրում: Ամբողջ ուշադրությունը պետք է կենտրոնացնել արդեն կառուցվող միավորների, գործարանների, շախտերի, ջրանցքների շտապօրենքի ավարտման և գործարկման վրա: Սահակյանի մի աշխատանք է, վոր պահանջում է մեղանից ուժերի իրական լարում, կառուցողական աշխատանքների ավելի լավ կազմակերպում, կառուցողական աշխատանքների ինքնարժեքի իջեցում: Գաղափար կազմելու համար շինարարական աշխատանքների ծավալի մասին՝ այս տարի նկատի ունեցեք, վոր 1933 թվին հիմնական ներդրումները մեր ժողովրդական տնտեսության մեջ նախատեսվում են 108 միլիոն ռուբլու գումարով, այդ գծով, անցյալ տարի փաստորեն ծախսված 107 միլիոն ռուբլու փոխարեն: Իրացնելով այդ գումարը՝ հիմնականում պետք է ավարտենք անցյալ հնգամյակից փոխանցված շինարարական որպեկոները և չահագործման հանձնենք, կատարելով միաժամանակ ապագա մի շարք խոշորագույն աշխատանքների հետադրումները և նախագծման աշխատանքները (Մեծ Սարգարաբաղի վոռոգում, Բաղսու և Գյումուշի կայանների հետադրում և նախագծում և այլն): Կառուցումների ֆրոնտում 1933 թվին ուշադրության կենտրոնում պետք է լինի Բանաֆեռգեսը—Յերևան—Բանաֆեռգես յերկաթգծային նյութով, վոր Յերևան—Աղստափա գծի սկիզբն է լինելու: Առաջնակարգ տեղերումն են մնում ցեմենտի գործարանը, վորի գործարկումն ամեն կերպ պիտի աշխատենք ավարտել ապրիլ—մայիսին, Ղարաքիլիսայի քիմիոմբինատը, վորի գործարկումը պետք է սկսվի ավելի շուտ: Այս հիշենք Ալահվերդու պղնձաձուլարանը, վորի գործարկումը պետք է անպայման կատարվի առաջին կվարտալում, և Ղափանի ֆլոտացիոն գործարանը, վորի գործարկումը պետք է կատարվի առաջին կիսամյակում: Քանաքեռի տեմպերին համապատասխան՝ պետք է շարունակվի Յերևանի կարբիդի յերկրորդ գործարանի կառուցումը: Վեր-

ջապես, լայն ֆրոնտով առաջ ենք տանելու Ղոբրի վոռոգման հետագա աշխատանքները՝ ավարտելու համար աշխատանքների յերկրորդ հերթը՝ Ալրաշ—խորհանտեսություն մայիսին, և յերրորդ հերթը՝ խորհանտեսություն—Վեդի—չայ՝ մինչև տարվա վերջը: Մնացած միավորների վրա կանգ չեմ առնի առանձին առանձին: Տեսնո՞ւմ եք կառուցողական ինչ լայնածավալ աշխատանք ունենք 1933 թվին: Յե՛վ այդ աշխատանքները պետք է կատարվեն ավելի բարձր վորակով, ավելի արագ ու եժան, քան մինչև հիմա: Կառուցողական աշխատանքների հաստատված նախահաշիվների խախտման համար մեղավորները խիստ պատասխանատվության են յենթարկվելու: Այսպիսով, ընկերներ, կառուցվող գործարանների և ջրանցքների շտապօրենքի ավարտումը և գործարկումը մեզ բոլորիս համար, Հայաստանի բանվորների, մասնադեմների համար, Հայաստանի բայլչեիկների համար պատվի գործ է լինելու:

Գյուղական աշխատանքների խնդիրները սպառնչ պարզություն և ցայտունություն գրված են կուսակցության առաջնորդի վերջին, ծրագրային ճառում: Ընկեր Ստալինի այդ ճառն աշխատանքի իսկական ուղեցույց պիտի դառնա մեր բոլոր գյուղական կազմակերպությունների համար, մեզ բոլորիս համար: Գյուղական աշխատանքների հիմնական թերությունները, վորոնք նըշված են ընկեր Ստալինի կողմից, ամբողջապես վերաբերում են նաև մեզ, Հայաստանի բայլչեիկներին: Իհարկե, մենք ունենք, և յես այդ մասին խոսեցի, խոշոր նվաճումներ նաև գյուղական աշխատանքների ֆրոնտում, սակայն մենք բայլչեիկներ չենք լինի, յեթե փորձեյինք ամենափոքր չափով անգամ կոճկել կամ սրբոյիլ գյուղական մեր աշխատանքի խոշոր բացերը և թերությունները: Վորո՞նք են այդ թերությունները: Ամենից առաջ այն, վոր չկարողացանք անհրաժեշտ չափով հաշվի առնել այն նոր պայմանները, վոր ստեղծվեցին կոլտնտեսային առևտրի թուլատման կապակցությամբ. նկատի ունեցանք կոլտնտեսային առևտրի դրական կողմը, թերագնահատելով նրա բացասական կողմերը: Թուլացավ պայքարը պետական մթերումների կատարման համար, կոլտնտեսությունների և մենատնտեսների կողմից պետության հանդեպ ստանձնած պարտականություններն անպայման կատարել տալու համար: Մեր անզգաստությունից ոգտվե-

ցին կուլակային ելեմենտները և նրանց դործակալները: Նրանք չահագործեցին կոլտնտեսականների սեփականատիրական ձեռք-տուժները՝ վիժեցնելու համար պետական մթերումները: Յեկ միքանի մթերումների դժուր անթույլատրելի կերպով թերկատար-վեցին՝ անցյալ տարվա համեմատությամբ զգալի չափով կրճատված պլանները: Կենսական և Անգլերկոմի ոգնությունը մենք ձեռ-նարկեցինք ուղղել կատարված սխալը, և բավական խոշոր աշ-խատանք այս ուղղությամբ կատարված է: Բայց դրանով բավա-կանանալ չի կարելի: Ղեկավարվելով ընկեր Ստալինի ցուցում-ներով այս մասին՝ մեր բոլոր գյուղական կազմակերպություն-ները պարտավոր են, հաշվի առնելով կատարված սխալը, այն-պես կազմակերպել մթերումների գործը և կոլտնտեսային ա-ռևտուրը, վոր վերջինը չհակադրվի առաջին, և խորհրդային իշխանության համապատասխան ղեկրեաների կամ կոնտրակտա-ցիոն պայմանագրերի համաձայն՝ լիովին և նշանակված ժամկետ-ներին կատարվեն թե՛ կոլտնտեսությունների և թե՛ ժենատնտե-սների բոլոր պարտականությունները պրոլետարական պետության հանդեպ:

Յերկորդե՝ մեզ մոտ նույնպես տեղ դառավ ընկեր Ստալինի մատնանշած այն թերությունը, վոր կոլտնտաշարժման բուռն ած-ման կապակցությամբ ստեղծված նոր պայմաններն անհրաժեշտ չափով հաշվի չառնվեցին: Կոլտնտեսությունների մասսայական աճումը, Հայաստանում բոլոր գյուղական տնտեսությունների 38 տոկոսի ընդգրկումը կոլտնտեսություններում պահանջում եր մեզինք կրկնապատկել և քառապատկել ղեկավարությունը կոլ-տնտեսությունների նկատմամբ, մոտենալ կոլտնտեսություննե-րին, մեր ձեռքը վերցնել կոլտնտեսությունների ղեկավարությու-նը, ստանձնել իրական պատասխանատվություն յուրաքանչյուր կոլտնտեսության գրություն համար, «ապահովել ամեն մի կոլ-տնտեսություն տարրական դրագիտություն ունեցող, տնտեսու-թյուն պլանավորելու և կազմակերպված ձևով վարելու ընդու-նակ մարդկանց վորոչ միևիմուծով»: Չկարողացանք այս անհրա-ժեշտ պահանջը կատարել բոլոր շրջաններում, բոլոր կոլտնտեսու-թյունների նկատմամբ: Ավելին. քիչ չեն կոլտնտեսություններ, վորոնց նկատմամբ կուսակցական ղեկավարությունն այնքան եր հեռու, անտարբեր, վոր ամեն ինչ թողնված եր ինքնահոսի, իսկ

«ինքնահոսն այժմ կարող ե վոչնչացնել ամբողջ գործը» (Ստա-լին): Ինքնահոսից, կոմունիստների անգործունեությունից ողտ-վում ե կուլակը, դասակարգային թշնամին, դաշնակը, ուղե-կուլյանտը՝ կոլտնտեսություն և նույնիսկ նրա ղեկավար որդան-ները սողոսկելու համար: Անհրաժեշտ ե անմիջապես վերջ տալ այս խայտառակությունը: Շրջանների ղեկավարությունը պետք ե իրոք պատասխանատվություն ստանձնի յուրաքանչյուր կոլտն-տեսության գրության և ղեկավարության համար, ապահովի յուրաքանչյուր կոլտնտեսություն անհրաժեշտ ու վորձված ղեկա-վար կազմերի միևիմուծով: Առանց սրա՝ կոլտնտեսությունների ամրացումը դատարկ խոսքի կվերածվի:

Յերկորդե՝ մեղ մոտ ել տարածված յերևույթ եր և դեռ չա-րունակվում ե մնալ՝ կոլտնտեսությունների գերազնահատումը, կոլտնտեսությունների սրբացումը: Շատերը չեն հասկանում, վոր կոլտնտեսությունը տնտեսության սոցիալիստական ձև լինելով հանդերձ՝ «ինքնին դեռ ամենևին չի ապահովված ամեն տեսակի վտանգներից, դեռ ամենևին յերաշխիք չի տալիս, վոր կստնտե-սություն ղեկավարության մեջ մուտք չեն գործի ամեն տեսակ հակահեղափոխական տարրեր, չի ապահովված այն բանից, վոր վորոչ պայմաններում հակահեղափոխական տարրերն իրենց նպատակների համար կարող են ողտադործել կոլտնտեսու-նեը» (Ստալին): Ի՞նչ ցույց տվեց վերջին շրջանի մեր աշխա-տանքների փորձը: Պատահական յերևույթ եր արդյոք, վոր յերբ վերջերս մթերումների դժուր ընդհուպ մոտեցանք կոլտնտեսու-թյուններին, անմիջապես աշխատանքից հանվեցին և դանազան պատրիժների յենթարկվեցին տասնյակ կոլտնտեսությունների նա-խադահներ, ղեկավարներ: Վո՛չ, ընկերներ՝ Պատահական չե այդ յերևույթը: Այն մատնանշում ե, վոր ողտվելով մեր թուլությունից և անուշադրությունից, դասակարգային թշնամին ամեն կերպ աշխատում ե իցկվել կոլտնտեսություն, բունել ղեկավար դիրք կոլտնտեսությունում՝ ողտադործելու համար կոլտնտեսությու-նը մեր դեմ, թորհրդային իշխանության դեմ: Այդ տեսակետից բնորոշ ե, վոր դաշնակներն ել վերջերս սկսել են սեթեկեթել կոլտնտեսային լողուններով, ալնարկել, թե նրանք թառ եյու-թյան կոլտնտեսությունների դեմ չեն: Ընկեր Ստալինի հայտնի նախադրուշացումն այն մասին, վոր խնդիրը միայն կոլտնտեսու-

թյուն կազմակերպելու մեջ չեն՝ վորպես կազմակերպության սոցիալիստական ձև, այլ պետք է միշտ նկատի ունենալ, թե ինչ բովանդակություն է տրվում այդ ձևին, թե ով է կանգնած կոլտնտեսության գլուխ, ով է ղեկավարում կոլտնտեսությունը, ամեն բոլոր աչքի առաջ պետք է ունենան մեր բոլոր կազմակերպությունները: Պետք է դուրս չպրտել կոլտնտեսություններից դիմականությունը հակահեղափոխականներին, վորոնք սոցիալիզմով կոլտնտեսություն, նրա ղեկավար ուղղաններում նստած, միաստորաբարություն ի սարսափ են կազմակերպում մեր դեմ: Մեր գյուղական կուսակցական կազմակերպությունները, յեթե նրանք հիմնվել են ճշտում են բայլչեիկյան հասունություն և կոմիւնիստական քննությունը բռնել, պետք է կրկնապատկեն զգաստությունները, մոտիկից և ճշտորեն ճանաչեն յուրաքանչյուր կոլտնտեսություն ղեկավար կազմը, ակտիվը, թույլ չտան կոլտնտեսություն խցկվել հակահեղափոխական սարսափներին:

Վերջապես, անհրաժեշտ է անմիջապես և իրականում վերադառնալ կուլակի դեմ մղվող պայքարի ճակատը, նկատի ունենալով, վոր փոխվել է դասակարգային թշնամու դեմքը և նրա գործելակերպը գյուղում: Մեր ընկերները գյուղերում և շրջաններում դեռ չեն հասկացել, վոր կուլակները, թեև ջարդված, բայց դեռ չլուծված (և դեռ չուտով վերջնականապես չեն վոչնչացվի, յեթե կոմունիստները հորանջեն և բարեհոգություն անեն, — չեշտում է ընկեր Ստալինը)՝ շատ վարպետորեն փոխում են պայքարի ձևերը մեր դեմ, հարմարվում են նոր պայմաններին, գործում են կոլտնտեսության նեցուխ, կազմալուծում են կոլտնտեսությունները, հակահեղափոխական սարսափ կազմակերպում: Մեր կուսակցական կազմակերպությունները միայն այն ժամանակ բայլչեիկյան հասունության քննությունը կբռնեն, յերբ բարձրացնելով մեր շարքերի հեղափոխական զգաստությունը, ընդունակ կլինեն տեսնելու կուլակին, ինչքան ել վոր նա դիմականություն ցուցնի, չեն խարվի նրա մեքենայություններից, կպատեն կուլակի դիմակը, «չեն հորանջի և բարեհոգություն չեն անի կուլակի նկատմամբ»:

Յեթե մենք ուզում ենք իրականում բարելավել մեր աշխատանքները գյուղում, ապա պետք է բոլոր դժբերով բարձրացնենք կոմունիստների իրական պատասխանատվությունը: Իսկապես վոր

այնքան հեղինակավոր և մեր կուսակցությունը, այնքան հզոր ու ամուր խորհրդային իշխանությունը, վոր, ինչպես չեշտում է ընկ. Ստալինը, չկա և չի կարող լինել վոչ մի ուժ, վոր կարողանա խափանել մեր աշխատանքները, յեթե միայն մենք ինքներս սխալներ չգործենք, զգաստ լինենք, մեր վատ աշխատանքի մեղքն ուրիշների վրա չբարդենք: «Վոչ թե գյուղացիների մեջ պետք է փնտել հացամթերումների գործում մեր հանդիպած դժվարությունների պատճառը, այլ հենց մեր մեջ, մեր սեփական շարքերում, վորովհետև մենք ենք կանգնած իշխանության գլուխ, մեր տրամադրության տակ կան պետության միջոցները, մենք կոչված ենք ղեկավարելու կոլտնտեսությունները և մենք պետք է կրենք գյուղի աշխատանքների լրակատար պատասխանատվությունը» — պարզ ու վորոշ ասում է ընկեր Ստալինը: Այս լավ պետք է խմանա մենք, Հայաստանի բայլչեիկներս: Յենելով ընկեր Ստալինը՝ գյուղական աշխատանքների մասին տված պատմական ցուցումներից, մենք պիտի կարողանանք կարճ ժամանակում մինչև վերջը հայտարարել և վերացնել այն թերություններն ու պակասությունները, վոր ունենք գյուղական աշխատանքներում:

Գյուղատնտեսական ֆրոնտի գլխավոր և հիմնական խնդիրը՝ բերատվության բարձրացումն է: Առաջին հիմնական խնդիր չափով ընդարձակելով ցանքերի տարածությունը՝ մենք չկարողացանք նույն համեմատությամբ առաջ շարժվել նաև բերքատվության բարձրացման ուղղությամբ: Բերքատվության համար տեսակետից տեղ-տեղ գրությունը միանգամայն անհանդուրժելի յե: Իհարկե, պետք է անխնա հարվածել հակահեղափոխական-կուլակային այն ելմաններին, վորոնք, իրենք սարսափ յենթարկելով կոլտնտեսության աշխատանքները և իջեցնելով նրա բերքատվությունը, փորձում են վարկարկել կոլտնտեսությունները, ըստ ելության այն հակահեղափոխական միտքը հայտնելով, թե կոլտնտեսական սխալման ինքն է ցածր բերքատվության պատճառը: Ո՞վ չգիտե, վոր բազմաթիվ են այն կոլտնտեսությունները, վորոնք, լավ կազմակերպելով աշխատանքները, ձեռք են բերել բերքատվության շատ ավելի բարձր ցուցանիշներ գյուղատնտեսական բոլոր ճյուղերում, քան տվյալ շրջանի միջին բերքատվությունն է: Խնդիրը կայանում է նրանում, վոր այս տարի, սկսած դարձան գյուղատնտեսական կամպանիայից, այնպես կա-

մակերպենք աշխատանքները, վոր ապահովվի բարձր բերքատվություն բոլոր կոլտնտեսությունների, ինչպես նաև մեծատնտեսների գծով, և գյուղատնտեսական բոլոր մշակույթների գծով: Յեւ այս խնդիրը միանգամայն իրագործելի չէ, պայմանով, վոր բայլչեիկյան վճռականությամբ լծվենք գյուղատնտեսական աշխատանքների այս վճռական ողակին:

Պետք է այնպես աշխատել, վոր այս իսկ տարի զգալի չափով բարձրանա բամբակի, խաղողի և այգիների բերքատվությունը: Ղուրղուղուլու շրջանի վորձը ցույց տվեց, վոր բամբակի բերքատվության ցածր լինելու հիմնական պատճառն այն է, վոր կոլտնտեսություններում խցկված կուլակային-հակահեղափոխական ելեմենտները, վորոնց ազդեցությանը, դժբախտաբար, յենթակա չէ յեղել նաև կոլտնտեսականների մի մասը, չնորհիվ կուսաշխատանքների թուլության, դիտակցաբար սարսուռով յեն յենթադրուած բամբակի մշակման ու հավաքման դործը: Ղուրղուղուլու կուսակցական կազմակերպության մեղքը նրանումն է կայանում, վոր ժամանակին չնկատեց կուլակային ելեմենտների հակահեղափոխական մեքենայությունները, հանդստացավ կոլտնտեսությունների աճման դափնիների վրա, կարծելով, վոր շրջանի տնտեսությունների մեծամասնության՝ կոլտնտեսությունների մեջ բնորոշվումով վճռված են բոլոր հարցերը: Ղուրղուղուլու կազմակերպության կարճատեսությունից ողտվեց դասակարգային թշնամին: Գործելով կոլտնտեսությունների ներսից և վոչ միայն կոլտնտեսություններից դուրս, նա կարողացավ իջեցնել բամբակի մշակման վորակը, խախտել մշակման պրոցեսների ժամկետները, իջեցնել բամբակի բերքատվությունը: Ղուրղուղուլու այս տարվա «դասերը» խիստ ուսանելի չեն մեր բոլոր շրջանների համար: Նրանք ասում են, վոր միայն մերկացնելով կուլակի մեքենայությունները, ջախջախելով կուլակին, կազմակերպելով կոլտնտեսային աշխատանքը, բարձրացնելով աշխատանքի արտադրողականությունը, ծավալելով սոցիալիստական մրցումը և կիրառելով ամենախիստ միջոցներ նրանց նկատմամբ, ովքեր կուլակին լսելով, չեն ցանկանում աշխատել, ովքեր խափանում են կոլտնտեսային արտադրությունը՝ մենք կկարողանանք բարձրացնել մեր դաշտերի բերքատվությունը: Նկատի պետք է ունենալ, վոր այս տարվանից սկսում ենք կոլտնտեսություններում ցանձաշրջանա-

տություն, վոր բերքատվության բարձրացման կարևորագույն մեկ լծակն է լինելու: Յեղելով դրանից՝ այս տարվա բամբակի պլանը հաստատված է 25.300 հեկտար և այդ պլանը պետք է կատարվի վոչ միայն քանակի տեսակետից, այլ նաև բարձր վորակով, ճիշտ նշանակված ժամկետներին: Հացահատիկային կուլտուրաների գծով էլ հիմնական խնդիրը բերքատվության բարձրացումն է: Մենք կոնկրետ խնդիր ենք դնում այս տարի՝ ագրոտեխնիկական անհրաժեշտ ձեռնարկումների կիրառմամբ բարձրացնել հացի բերքը մեկ հեկտարից դեթ մինչև 10 ցենտներ, վերջին տարիների միջին 8 ցենտների փոխարեն: Խաղողի և այգիների բերքատվության բարձրացումը նույնպես չափով վրելի ուշադրությունից, և այստեղ նմանապես պետք է նկատի ունենալ վորակը: Յեթե Հայաստանի լավ տեսակի խաղողները և ընտիր մրդերը, մինչև այսօրվա պես անուշադիր ու անմշակ մնան, կորուստյան վտանգի առաջ կկանգնեն: Պետք է հատուկ ուշադրության և խնամքի արժանանան: Անանապահության գծով հիմնական խնդիրը հոտի ավելացումն է, նրան կերով ապահովելը, կաթնատվության բարձրացումը:

Գյուղատնտեսական Փրոնտի այս բոլոր խնդիրները պահանջում են մարտական դրության մեջ դնել գյուղական կուսակցական կազմակերպությունները: Այդ ուղղությամբ, կենտկոմի պլենումի հայտնի վորոշումը՝ ՄՏ կայաններին և խորհրդատեսություններին կից հատուկ քաղաքականների կազմակերպման մասին՝ ունի հսկայական նշանակութուն: Քաղաքականներն այն կազմակերպություններն են լինելու, վորոնց միջոցով կուսակցությունն ուժեղացնելու չէ իր ազդեցությունը գյուղում, ամրացնելու չէ գյուղական կուսկազմակերպությունները, մաքրելու չէ կոլտնտեսությունները հակահեղափոխական ելեմենտներից և ազդեցություններից, վերացնելու չէ լողրությունը կոլտնտեսություններում, բարձրացնելու չէ բերքատվությունը և ապահովելու կոլտնտեսությունների և խորհրդատեսությունների կողմից պետական պարտավորությունների կատարումը:

Քաղաքի կուսակցական և բանվորական կազմակերպությունները, մանավանդ այժմ, դարձան գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպմամբ, պետք է ավելի անմիջական ու շոշափելի դորձնեն ոժանդակությունը գյուղին: Յեւ առաջին սրինակն այս

ուղղութեամբ պետք է տան Յերևանի կաղնակերպութեանը և արհմիութեանները:

Կուլտուրական շինարարութեան բնագավառում գլխավոր խնդիրը՝ արդեն ձեռք բերված քանակական նվաճումների բաղձապատկումն է բարձր վորակով: 1933 թիվն անդրադրուած է վերջնական վերացման, դպրոցների և ինստիտուտների աշխատանքների բարեկարգման, կադրերի վորակի բարձրացման տարին է լինում:

Առաջին հնգամյակը լենինյան կուսակցութեան աճման ու ամրացման աննախընթաց շրջանը յեղավ: Հնգամյակի մարտերում, կուլակային, աջ թեքման, «ձախ» խոտորումների, հակահեղափոխական տրոցկիզմի դեմ մղված մարտերում ե՛լ ավելի կոփվեց և ամրացավ լենինյան կուսակցութեանը: Հաղթներով ու հաղաթներով կուսակցութեան շարքերը մտան հնգամյակի հերոսները, սոցիալիստական նախաձեռնողները, հնգամյակի մարտերում պրոլետարական կոփում ստացած հարվածայինները: Ե՛լ ավելի ամրացան միլիոնավոր այն թեւերը, վոր անքակտելի յեն դարձնում կուսակցութեան կապը՝ իր դասակարգային պատվանդանի հետ: Սակայն չի կարելի աչքաթող անել և այն հանգամանքը, վոր կուսակցութեան մասսայական աճման պայմաններում՝ կուսակցութեան շարքերը կարողացան խցկվել և առանձին խորթ ու անհարգատ ելեմենտները դասակարգային թշնամու բանակից, և այն, վոր դասակարգային սուր պայքարի պայմաններում կուսակցութեան անդամների վորոչ չերտեր, անկայուն ելեմենտներ, յենթարկվում են դասակարգային թշնամու ազդեցութեանը, պաշտպանվելով կուստոմսով, դավաճանում են բանվոր դասակարգին, փաստորեն անցում են թշնամու բանակը: Կուսակցութեան շարքերը մաքրելու, մարտականացնելու, դավաճաններին, յերկերեսանիններին, թուլամորթներին, ոպորտունիստներին մեր շարքերից դուրս չպրտելու համար է, վոր Կենտկոմն ընդունել է կուսաշարքերի ընդհանուր զտման մասին իր կարևորագույն վորոշումը:

Կուսաշարքերի զտումը մենք պետք է կատարենք՝ աչքի առաջ ունենալով ստալինյան այն պահանջը, թե՛ «հեղափոխական գգաստութեամբ հենց այն հատկութեանն է, վորն այժմ առանձնապէս

կարևոր է բայշխիկների համար»: Յուրաքանչյուր կոմունիստ պետք է իմանա, վոր գործով և միայն իրական գործով է, իրեն հանձնարարված պարտականութեանների լրիվ և ըստ ելութեան կատարմամբ է, վոր նա մասսաների առաջ քննութեան պետք է տա «հեղափոխական զգաստութեան» համար: Յեւ այսօր, ավելի քան յերբեք, խիստ և անխնայ պետք է լինենք դավաճանների, յերկերեսանիների, կուսակցութեան լենինյան միասնութեանը խախտողների, կուսակցութեան զգաստութեանն իջեցնողների նկատմամբ: Ռյուտին-Սլեպկովյան հակահեղափոխական սպիտակգլխադրիական խմբակի, Սմիրնովի, Եյսմոնտի և Տոլմաչևի հակահեղափոխական-դավաճանական խմբակի փորձը մի՞թե պարզ չի ցույց տալիս, թե ինչի յեն ձգտում կուլակութեան շահերի այդ յերդվյալ պաշտպանները: Մի՞թե պարզ չէ, վոր ներկա պայմաններում կուսակցութեան լենինյան դժից ամեն մի ամենափոքր չեղումն ուղղակի հանգում է բացահայտ կուլակային, սպիտակգլխադրիական հակահեղափոխութեան: Դո՛ւրս մեր լենինյան շարքերից ամեն տիպի և տեսակի յերկերեսանիները, կուսակցութեան գիծը «արտաքուստ» ընդունողները և ըստ ելութեան իրենց գործունեյութեամբ այդ գիծը խախտողները, դո՛ւրս մեր շարքերից ոպորտունիստներն ու թուլամորթները: Ավելի զգաստ, ավելի արթուն: Ավելի կործանիչ կրակ աջ թեքման դեմ, վորպէս գլխավոր վտանգի, ավելի կործանիչ կրակ «ձախ» ոպորտունիստների, աջերի անմիջական գործակիցների դեմ:

Հայաստանի բայշխիկները պետք է գործով, աշխատանքի իրական արդյունքներով, առաջիկա կուսզտմանը՝ կուսակցական հասունութեան և կոփվածութեան քննութեանը բռնեն: Մարտունու կուսդեկավարութեան ցրման և կուսակցութեանից վտարման փաստը դատ պիտի լինի շատերի համար: Յերկերեսանի Փիրզուրովի դեպքը, վորին յերեկ՝ ԿՎՀ-ն վտարեց կուսակցութեանից տրոցկիստական յերկերեսանիութեան համար, պետք է հարկադրել յուրաքանչյուր կուսակցականի՝ լինել ավելի զգաստ, ավելի պահանջկատ, ավելի պատասխանատու այն դիրքում, ուր նա կանդնած է վորպէս հեղափոխութեան պահակ:

Ընկերներ, մեր կուսակցութեանը, Համկոմկուսը միջադգային պրոլետարական հեղափոխականների կուսակցութեանն է: Մեր կուսակցութեանը Կոմիտեների առաջին կուսակցութեանն է:

Հենինը սերում էր կրկնել, վոր «մենք դիտել ենք և կարող ենք դիտել մեզ միմիայն վորպես պրոլետարիատի միջազգային բանակի ջոկատներից մեկը»։ Ահա, թե ինչու մեր աշխատանքները, մեր հաղթանակները միջազգային պրոլետարական հեղափոխության հաղթանակներն են։ Ահա, թե ինչու անսահման ե մեր հենդամյակի հաղթանակի միջազգային նշանակությունը, վորի մասին մանրամասն խոսեց իր գեկուցման մեջ ընկեր Ստալինը։

Վերցնենք հնդամյան ընդհանուր պլանի Հայաստանի մասնիկը միայն։ Խոշոր ե, ընկերներ, Հայաստանի հնդամյակի հաղթական կատարման վոչ միայն «ներքին», այլ նաև միջազգային նշանակությունը։ Յեթե Խորհրդային իշխանության հաստատման առաջին շրջանը Հայաստանում՝ հաստատում էր լենինյան այն թեզը, թե՝ «Խորհրդային իշխանության գաղափարները և սկզբունքները մատչելի չեն և անմիջապես իրագործելի վոչ միայն արդյունաբերական տնտեսակետից դարձանք յերկրներում, վոչ միայն ունենալով սոցիալական այնպիսի մի հենարան, վորպիսին ե պրոլետարիատը, այլև ունենալով այնպիսի մի հիմք, ինչպես գյուղացիությունն է», ապա հնդամյակի կատարումը Խորհրդային Հայաստանում յեկավ ապացուցելու, վոր միայն Խորհրդային իշխանության պայմաններում ե, և կուսակցության լենինյան ազգային քաղաքականության կիրառմամբ ե, վոր հնարավոր յեղավ վոչ միայն կենդանացնել և վրտքի հանել 1920 թվին մահամերձ մեր յերկիրը, այլև յոթմիջյան քայլերով առաջ շարժվել՝ վերացնելու համար այն անհավասարությունը, կուլտուրական, տնտեսական, քաղաքական այն հետամնացությունը, վոր պատմական արդյունքն էր կալվածատերերի և կապիտալիստների տիրապետության։

Խորհրդային Միության հարավային սահմանների վրա ընկած, Արևելքի դռանը դանդաղ մեր յերկրի փորձն անհետևանք չի անցնի մեր սահմաններից դուրս շահագործվող մասսաների հեղափոխականացման տեսակետից։ Վերցնենք այն ազդեցությունը, վոր ռևոլյուցիոն թեկուզ մեր հնդամյակի կատարումը կապիտալիստական յերկրներում շահագործվող հայ աշխատավորների և բանվորների վրա։ Հնդամյակի կատարումը, 1932 թվին, վորպես հնդամյակի կատարման արդյունք՝ մոտ 8.000 աշխատավորների ներգաղթը և տեղավորումը Խորհրդային հայրենիքում՝ չեյին կարող չբանալ արտասահմանյան հայ աշխատավորների աչքերը,

չեյին կարող չցրել այն մշուշը, վոր ցանում եյին հայ բուրժուական-ազգայնական կուսակցությունները՝ տեական դարձնելու համար իրենց լուծը հայ աշխատավորների վրին։ Հնդամյակի հաղթանակն ամբարցրեց մեր դիրքերը մեր թշնամիների դեմ նաև արտասահմանում։ Հնդամյակի հաղթանակը խորացրեց քայքայման ու նեխման անբուժելի ակտերը, վորոնց սուր արտահայտություններով համակվել ե այսօր դաշնակների կուսակցությունը։ Ծարքերի քայքայում, ընդհանուր դժգոհություն, սաստկացող քաջֆայական սպաքար, Դաշնակցության դեկավարների քրեական «քաջագործությունները» և վոճրագործությունների հայտական «բաղադրությունները» և վոճրագործությունների հայտարարում, շարքայինների հեռացում կուսակցությունից, — ահա Դաշնակցության պատկերն արտասահմանում։ Դաշնակցությունը մահապարտված ե, նա ապրում ե իր որհաղը և նրան չեն փրկի վո՛չ «մարտկոցականները» մանյովրները, նրանց անատամ պայքարը Բյուրոյի դեմ, վո՛չ Բյուրոյի նոր մանյովրը, վորով վերջինս փորձում ե դիմակավորել իր արյունոտը, ինտելիգենտիստական դեմքը՝ «գաղափարական ոպդիցիայի» հնամաշ ու թափանցիկ դիմակով։ Ո՞ւմ են ուղում խաբել այդ պարոնները։ Ո՞ւմ ե ուղում խաբել Խատիսովը, յերբ Մարսելի բանվորների առաջ «մեղրածոր» լեզվով խոսում ե «հայրենիքի» մասին։ Ի՞նչ «հայրենիքի» մասին ե խոսում ցարական աղվեսը։ Մի՞թե Խատիսովները և վրացյանները մոռացել են Հայաստանի բանվորների և գյուղացիների դատավճիռն իրենց մասին։ Յեթե այդքան կարճ ե հակահեղափոխական եմիգրանտների հիշողությունը, ապա այդ մասին պետք ե հիշեցնեն նրանց արտասահմանի հայ աշխատավորներն ու բանվորները։ Հարվածելով դաշնակներին, քայքայելով հայ բուրժուազիայի այդ կուսակցությունը, ջախջախելով Խորհրդային հայրենիքի բոլոր դիմակավոր թե անդիմակ թշնամիներին մինչև վերջը, — միայն այս պայմանով ե, վոր արտասահմանի հայ աշխատավորներն իրավունք կունենան բաց ձախառով կանգնել Խորհրդային հայրենիքի կողքին, նրա կարմիր դրոշակի տակ, վորպես Խորհրդային հայրենիքի իրական պինակիցներ։

Ընկերներ, յես աշխատեցի, հենվելով ընկեր Ստալինի գեկուցման և Համկոմկուսի Կենտկոմի և ԿՎՀ-ի հունվարյան պլենումի

արդյունքները վրա՝ ընդհանուր գծերով միայն բնորոշել հնգամյակի հիմնական արդյունքները և այս տարվա միջանի գլխավոր խնդիրները: Իրավացի չե ընկեր կազանովիչը, յերբ նկատում ե, վոր չնայած ցանկութեան, այսոր մեղ համար դեռևս դժվար ե իր ամբողջ մեծութեամբ ներկայացնել վիթխարի այն աշխատանքը, վոր կատարվեց Խորհրդային Միութեան մեջ՝ առաջին հնգամյակում: Տարիներ կանցնեն, և տարիները սահմանադրելից ավելի բարձր, ավելի հոյակապ կփայլեն հիթավի հերոսական այն աշխատանքների արդյունքները, վորոնց դուժարը յեղավ մեր առաջին հնգամյակը:

Սակայն ինչքան ել վորոշ, վորքուրիչ են առաջին հնգամյակի արդյունքները, մեղ սպասում են նոր աշխատանքներ, մենք չարունակում ենք անդուլ մեր յղայքարը՝ անդասակարգ սոցիալիստական հասարակարգ կառուցելու համար: Յեվ նոր մարտերում, յերկրորդ հնգամյակի մարտերում մեր հաղթանակները կլինեն ավելի հոյակապ ու փառավոր:

— Վորովհետև կուսակցութունն անպարտելի չե, յեթե նա ցիտե, քե ո՞ւր պետք ե տանի գործը, և չի վախենում դժվարութիւններից:

— Վորովհետև կուսակցութունը հավատարիմ ե լենինյան մեծ ավանդներին և չի շեղվում նրա նախագծած պայքարի ու հաղթանակների ուղիներից:

— Վորովհետև կուսակցութեան դեկի մոտ կանգնած ե մեծ լենինի գործակիցներից և գիմակիցներից ամենամեծը—մեր առաջնորդ ընկեր Ստալինը:

Լենինյան կենտկոմի, կուսակցութեան մեծ առաջնորդ Ստալինի ղեկավարութեամբ, հառա՛ջ, ընկերներ, դեպի սոցիալիզմի համաշխարհային հաղթանակը (հոտընկայո բուռն ծափահարութիւններ):

ԱՌԱՋԻՆ
 ՀԼԳԱՄՅԱԿՈՒՄ
 ՓՈԽՎԵՑ
 ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
 ՀԱՅԱՍՏԱՆԻ
 ՏԼՏԵՍԱԿԱՆ
 ԶԱՐԿԵՐԸ



ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

А. Ханджян

Победа пятилетки и Советская Армения

Издательство ЦККП (б) А

Партиздат—Эривань 1988

32.175